

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԱՆՈՑ ԱՂԵԿՑԱՆ» ՍՊԸ

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման
/ք. Երևան, Մալաթիա Մեքաստիա վարչական շրջան, Մոնթե Մելքոնյան 16/

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ
(լրամշակված)



Նախագծի պատվիրատու՝

«Խաչիար» ՍՊԸ

Կատարող՝

«Ճարտարապետական Արվեստանոց Աղեկյան» ՍՊԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ _____	4
1.1 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը _____	6
1.2 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը _____	9
2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ) _____	14
2.1 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ _____	14
2.2 Կառուցվող համալիրի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներ _____	19
2.3 Կանաչապատում և բարեկարգում _____	19
2.4 Նախապատրաստական աշխատանքներ _____	20
2.5 Հողային աշխատանքներ _____	20
2.6 Շինարարական աշխատանքների կատարման սխեմա _____	21
2.7 Շինարարական աշխատանքների տեսակները և նախապատրաստական փուլի ամփոփ նկարագիրը _____	23
2.8 Շինարարության կազմակերպում _____	24
2.9 Ջրամատակարարում և ջրահեռացում _____	26
2.10 Ջեռուցում և զազամատակարարում _____	27
2.11 Ներքին և արտաքին ջրահեռացում՝ կոյուղի _____	27
2.12 Աձրնաջրերի հեռացում /հեղեղատար կոյուղի/ _____	27
2.13 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում _____	28
3. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ _____	30
3.1 Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները _____	30
3.2 Ռելիեֆը _____	30
3.3 Կլիման _____	31
3.4 Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները _____	34
3.5 Տարածքի սեյսմիկ բնութագիրը _____	35
3.6 Օդային ավազան _____	35
3.7 Ջրային ռեսուրսներ _____	36
3.8 Հողային ռեսուրսներ _____	37
3.9 Կենսաբազմազանություն _____	38
3.9.1 Բուսական աշխարհ _____	38
3.9.2 Կենդանական աշխարհ _____	39
3.10 Սոցիալ տնտեսական պայմանները _____	40
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՄԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ _____	44
4.1 _____ Ռիսկերի գնահատում _____	44
4.2 Օղի աղտոտում _____	44
4.3 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն _____	45
4.4 Մթնոլորտային օդ _____	48
4.5 Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում _____	48
4.6 Հողային ռեսուրսներ _____	49
4.7 Կենսաբազմազանություն _____	50

4.8 Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է` _____	51
4.9 Թափոնների և այլ նյութերի կառավարումը _____	51
4.10 Աշխատանքի անվտանգություն և առողջություն _____	52
4.11 Փոխհատուցում _____	53
5. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ _____	55
6. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ _____	55
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ _____	57
8. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ/ ՊԼԱՆ _____	62
9. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____	65
10. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ _____	66
11. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ԱՐԴԻԱԿԱՆՑՄԱՆ ԵՎ ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ (ԴԵՆԴՐՈՆԱԽԱԳԻԾ) _____	80

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվող գործունեություն	Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցում
Նպատակը	Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցում
Նախագծի պատվիրատու, կառուցապատող	«ԽԱԶՀԱՐ» ՍՊԸ
Ձեռնարկող	«Ճարտարապետական Արվեստանոց Աղեկյան» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	Հասցե. ՀՀ, 0054 ք. Երևան, Պոռշյան 2/1
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	Հեռ. ` 091423869 098131471 Էլ-փոստ` <a.a.aghekyan@gmail.com>
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Մոնթե Մելքոնյան 16 հասցե
Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը	0.339197 հա /3391,97 քմ/
Բնակելի համալիրի կառուցապատման մակերես	Կառուցվող շինությունների զբաղեցված մակերեսը ներառյալ` ասֆալտապատ և սալիլապատ հատվածներ 2072մ ²

Նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Ճարտարապետական Արվեստանոց Աղեկյան» ՍՊ ընկերությունը, իրավաբանական հասցե` ՀՀ, 0054 ք. Երևան, Պոռշյան 2/1: Գործունեության իրականացման վայրը` ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Մոնթե Մելքոնյան փողոց` 16 հասցե:

Նախագծի պատվիրատու «ԽԱԶՀԱՐ» ՍՊ ընկերության կողմից Մոնթե Մելքոնյան փողոցի 16 հասցեում գտնվող 0.339197 հա հողակտորի վրա նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ համալիր: Կառուցապատվող հողամասը գտնվում է Մոնթե Մելքոնյան փողոցի անմիջապես հարևանությամբ, իսկ Ծովակալ Իսակովից 650 մ հեռավորության վրա, Ծովակալ իսակով և Մոնթե Մելքոնյան տրանսպորտային հանգույցի հյուսիս արևմտյան մասում` հանգույցից 650 մ հեռավորության վրա:

«Ճարտարապետական Արվեստանոց Աղեկյան» ՍՊ ընկերությունը մտադիր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոց 16 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի

վերաբերյալ ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, նախատեսվող գործունեության նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ²-ը (կառուցապատվող հողամասի մակերեսը կազմում է 3391,97 մ², իսկ բնակելի համալիրի շինության զբաղեցված մակերեսը՝ ներառյալ՝ ասֆալտապատ և սալիլապատ հատվածներ 2072 մ²):

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանից, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է Նախնական գնահատման հայտի պատրաստում: Նախնական գնահատման հայտի բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն նախնական գնահատման հայտում: Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

- Օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,
- Շինարարության փուլում մերձակա բնակչությանը /Երևան համայնք Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջան/ պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,
- Շինարարական մեքենաների և տեխնիկայի աշխատանքով պայմանավորված տեղի երթևեկության խափանում,
- Հողերի դեգրադացիա և էրոզիա բուսածածկի վնասման արդյունքում, Հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում առաջացող արտահոսքերով,
- Հողերի աղտոտում՝ շինարարության և շահագործման ընթացքում առաջացող թափոններով, շինարարական և կենցաղային աղբով,
- Աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման շինարարության և շահագործման ընթացքում:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախնական գնահատման հայտի մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- Նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը,
- Նախատեսվող գործունեության ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- Տարածքի վերաբերյալ վերլուծությունները, սխեմաները,
- Շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- Բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ տեսաձայնագրություն) ներկայացում շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Երևան քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ՝ 2020թ-ի մարտի 10-ին, որի վերաբերյալ արձանագրությունը ներառված է սույն ՆԳՀ-ի փաթեթի Հավելված 2-ում: Հանրային քննարկման հայտարարությունը սահմանված կարգով հրապարակվել է Հայաստանի Հանրապետություն օրաթերթի 2020թ-ի փետրվարի 26-ի համարում, որի սկան պատճենը ևս ներառված է սույն ՆԳՀ-ի փաթեթի Հավելված 2-ում:

1.1 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և

այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի 342-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) եվ սպառման թափոնների ցանկ:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառվումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2018թ.) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.2 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Ճարտարապետական Արվեստանոց Աղեկյան» ՍՊ ընկերությունը: Նախատեսվող գործունեության անվանումն է՝ Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատում:

Նախագծի պատվիրատուն է հանդիսանում «ԽԱԶՀԱԸ» ՍՊ ընկերությունը, որը ընկերության ներկայացուցչին սեփականության իրավունքի գրանցման վկայականով /հ. 31052019-01-0074, կադ. ծածկագիր 01-007-0282-0247/ հատկացված 0.339197 հա հողամասի սահմաններում, Մոնթե Մելքոնյան փողոցի անմիջապես հարևանությամբ կառուցում է բազմաֆունկցիոնալ համալիր, ինչպես նաև համալիրը սպասարկող ճանապարհային ցանց: Կառուցապատման մակերեսը կազմում է 2072մ²:

Նախագծվող տարածքը իրենից ներկայացնում է Մոնթե Մելքոնյան փողոցից աճող ռելիեֆ, որի բացարձակ նիշը փողոցին կից հատվածում 969-970 մ է, իսկ ռելիեֆի բարձր հատվածում կազմում է 983.80 մ:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման: Հողամասը ազատ է կառուցապատումից, արևելքից արևմուտք ունի ռելիեֆային մեծ անկում: Նախագծվող հողամասի հարևանությամբ Մոնթե Մելքոնյան փողոցն է, Կիլիկիա թաղամասը, Մարգահամեզային համալիրի տարածքը և կառուցապատումից ազատ այլ հողամասեր:

Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Ծովակալ իսակով և Մոնթե Մելքոնյան տրանսպորտային հանգույցի հարևանությամբ, հանգույցի հյուսիս արևմտյան

մասում՝ 650 մ հեռավորության վրա: Կառուցապատվող տեղամասից 375 մ հեռավորության վրա բնակելի սեփական տներ են, իսկ 100 մ հեռավորության վրա այլ շինություններ և օբյեկտներ են: Տարածքը ազատ է կառուցապատումից և ենթակառուցվածքներից: Տարածքում բացակայում են ծառաթփուտային բուսականությունը տեղ-տեղ հանդիպում է հողային ծածկույթ:

Նախագծի մշակման, կառուցապատման և գործունեության իրականացման համար հիմք է հանդիսացել հողամասերի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքով հատկացված պետական գրանցման վկայականը, որը ներառված է սույն ՆԳՀ-ի փաթեթի Հավելված 1-ում, Երևանի քաղաքապետարանի կողմից 14.11.2019թ. տրված թիվ 01/18-07/2-80907-1143/ նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանքը/, որը նույնպես ներառված է սույն ՆԳՀ-ի փաթեթի Հավելված 1-ում:

Վերը նշված վկայականով ամրագրված հողամասի սահմաններում կառուցվելու է բազմաֆունկցիոնալ համալիր, ինչպես նաև համալիրը սպասարկող, մոտեցնող ճանապարհ: Կառուցապատվող տարածքին մոտեցումը կապահովվի առկա ճանապարհով, որն անցնում են հողամասի անմիջապես հարևանությամբ: Կից տարածքներով անցնում են գործող ինժեներական ենթակառուցվածքները:

Տեղանքը, ուր տեղակայված է հողատաճաք, ունի մեծ թեքություն: Շնորհիվ ռելիեֆային առանձնահատկությունների, նախատեսված է նկուղային և կիսանկուղային հարկեր: Կառույցը հողամասի ստորին հատակագծային նիշից նախագծվել է մինչև 22 հարկ, 18-րդ հարկից հետո նահանջով: Բնակելի հարկերի բարձրությունը հարկից հարկ ընդունվել է 3.30մ:

Նախագծվող տարածքն իրենից ներկայացնում է Մոնթե Մելքոնյան փողոցից աճող ռելիեֆ, որի բացարձակ նիշը փողոցին կից հատվածում 969-970 մ է, իսկ ռելիեֆի բարձր հատվածում կազմում է 983.80 մ:

Ենելով ռելիեֆի ընձեռնած հնարավորությունից, բարձրահարկ շենքը տեղադրվել է հնարավորինս հետ (35մ) փողոցին զուգահեռ: Այդ կոմպոզիցիայից ելնելով տարածքը բաժանվել է երկու հատվածների՝ բակային տարածք և հետ ընկած բնակելի շենք: Բակային տարածքում նախատեսված է ունիվերսալ հրապարակ՝ թենիս, բասկետբոլ, մինի ֆուտբոլ և այլն: Բակային տարածքը գտնվելով շենքի և փողոցի միջև հնարավորություն է ստեղծում բնակարանները պաշտպանել աղմուկից: Բակային տարածքում նախատեսված է կամաչապատել բարձր և լայնասաղարթ ծառատեսակներով: Կանաչապատ տարածքների ռոռզման համար նախատեսված է կաթիլային ռոռզման համակարգ:

Բազմաֆունկցիոնալ համալիրի համայնապատկերը



Հատկացվող հողամասի մակերեսը կազմում է 0.339197 հա, իսկ կառուցապատման մակերեսը 2072մ²: Բակային տարածքի ասֆալտապատ և սալիկապատ տարածքները կազմում են 747քմ, իսկ բակային տարածքի կանաչապատ մակերեսը կազմում է 1320 քմ: Կառուցապատման տոկոսն ընդունված է 60%, իսկ կանաչապատմանը՝ 40 %: Հարկայնությունն ընդունված է մինչև 22 հարկ: Համալիրի կառուցապատման ծավալատարածական հորինվածքը նախատեսվել է ներդաշնակ տարածքի լանդշաֆտային առանձնահատկություններին: Տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են.

- Հողամասի մակերեսը՝ շուրջ 3392 մ²,

- Կառուցապատման մակերեսը 2072 մ², որից՝/ասֆալտապատ և սալիկապատ հատվածներ/ - 747 մ²
- կանաչապատ մակերես - 1320 մ²
- Շինարարական մակերես այդ թվում՝
/վերգետնյա հարկերի, բնակելի և հասարակական/ - 20400քմ
- Բնակարանների քանակ-120 հատ
- Ստորգետնյա ավտոկայանատեղի 4 հարկ՝ 153 հատ ավտոմեքենայի համար:
- Բնակելի ընդհանուր մակերես 15 հարկ՝ 18000 քմ:
- Հասարակական բազմաֆունկցիոնալ կառույց 2 հարկ՝ 2400քմ:
- Կառուցապատման տոկոս, ներառյալ ասֆալտապատ և սալիկապատ հատվածներ -60%:

Տարածքն ազատ է կառույցներից և շինություններից: Շենքերի առաջին հարկերը նախատեսված են հասարակական նշանակության նպատակների համար:

Բնակելի թաղամասի արտաքին ինժեներական ցանցերի համար մշակվելու են վերջնական նախագծերը /ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում/ նշված ծառայությունները մատուցող կազմակերպությունների կողմից տրանադրած տեխնիկական պայմանների համաձայն:

Բնակելի հարկերը տիպարային են, բաղկացած՝ 4 սենյականոց, 3 սենյականոց և երեք 2 սենյականոց բնակարաններից: Պատվիրատուի առաջարկով որոշ բնակարաններ միավորված են:

Վերելակները յուրաքանչյուր շենքում երկուսն են՝ 400 և 1000 կգ բեռնաբարձությամբ: Նրանցից 1000 կգ-անոցը նախատեսված է հրշեջ ստորաբաժանում տեղափոխելու համար:

Միջանցքները սարքավորված կլինեն ծխահեռացման համակարգով: Բնակարաններում նախատեսված են ինքնաշխատ ծխային հրդեհային ազդարարարման սարքերով:

Մեքենաների մուտքը ստորգետնյա ավտոկայանատեղի նախատեսված է երկկողմանի՝ բաց թեքահարթակներով, լուսացույցային կարգավորումով:

Պատերը նախատեսվում են իրականացվել պեմզաբլոկներով, արտաքինից երեսապատումը բազալտե և տուֆե սալերով, ցեմենտորոդով: Ըստ պատվիրատուի ցանկության հնարավոր է նաև երեսապատման այլ նյութերի կիրառում, որոնք չեն հակասում ՀՀ գործող շինարարական նորմերին: Ծածկերը Ե/Բ միաձույլ սալեր են, միջնորմները՝ պեմզաբլոկ, գիպսաստվարաթուղթ: Տանիքը՝ հարթ-համատեղված, ճկուն փաթթոցային ծածկույթով և կազմակերպված ջրահեռացումով: Հատակները նախատեսվում է կառուցել բոլոր միջհատակային հաղորդագծերը տեղադրելուց հետո:

Նախագծով նախատեսված է արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ:

Կառույցում նախատեսված է նաև հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու անհրաժեշտ պայմաններ:

Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված սեյսմիկ - III գոտու համար (9 Բալ և ավելի):

Ըստ նշված բնութագրի ՄՆԻՊ 1.04.03-2008-ի նորմատիվներով նշված աշխատանքների իրականացումը հաշվարկված է 2 տարի, կամ 24 ամիս շինարարության տևողություն, այդ թվում հողային աշխատանքների տևողությունը 2 ամիս:

Նախագիծը մշակված է համաձայն ՀՀ տարածքում գործող հետևյալ նորմատիվային փաստաթղթերի՝

ՀՀՇՆ 30-01-2014 քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում

ՀՀՇՆ 31-01-2014 Բնակելի շենքեր. Մաս1 .Բազմաբնակարան Բնակելի Շենքեր

ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի Եվ Շինությունների Հրդեհային Անվտանգություն

ՀՀՇՆ IV-11.03.03-02 Ավտոկայանատեղեր



Բազմաֆունկցիոնալ համալիրի տեղադիրքի իրադրային սխեման

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՋՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

2.1 Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

«ԽԱԶՀԱՐ» ՍՊ ընկերության կողմից Մոնթե Մելքոնյան փողոցին զուգահեռ նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ համալիր՝ անհրաժեշտ սպասարկման տարածքներով, համաձայն «Ճարտարապետական Արվեստանոց Ադելյան» ՍՊ ընկերության կողմից մշակված նախագծի: Հատկացվող հողամասի մակերեսը կազմում է 0.339197 հա, իսկ կառուցապատման մակերեսը 2072 մ² է: Նախագծման հիմք է հանդիսացել կառուցապատողի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավական պետական գրանցումը, հ.31052019-01-0074 վկայականը և էսքիզային նախագծի հիման վրա Երևանի քաղաքապետարանի կողմից տրված նախագծման թույլատվությունը (Ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա N01/18-07/2-80907-1143):

Մասնաշենքերի հարկայնությունն ընդունված է մինչև 22 հարկ: Տեղանքն, ուր տեղակայված է հողատաճաք, ունի մեծ թեքություն, շնորհիվ ռելիեֆային առանձնահատկություններով, նախատեսված է նկուղային և կիսանկուղային հարկեր: Կառույցը հողամասի ստորին հատակագծային նիշից նախագծվել է մինչև 22 հարկ, 18-րդ հարկից հետո նահանջով: Բնակելի հարկերի բարձրությունը հարկից հարկ ընդունվել է 3.30մ:

Անմիջապես տարածքի հարևանությամբ Մոնթե Մելքոնյան փողոցն է, կից հողամասերն են Կիլիկիա թաղամասը, Մարզահամեզային համալիրի տարածքը և չկառուցապատված այլ հողամասեր: Տարածքի հյուսիս-արևմտյան հատվածում իրականացվում է «Վերածնունդ» թաղամասի կառուցապատման աշխատանքները:

Կառուցապատվող տարածքին մոտեցումը կապահովվի առկա ճանապարհով, որն անցնում է հողամասի հարևանությամբ: Բազմաֆունկցիոնալ համալիրի սպասարկման համար նախատեսվում է կառուցել համալիրը սպասարկող ճանապարհ: Տարածքի մերձակայքում՝ Մոնթե Մելքոնյան փողոցի հակառակ կողմում, դեպի արևելք ուղղությամբ իրականացվում են զվարճանքի կենտրոնի կառուցման աշխատանքներ: Տարածքը մինչ կառուցապատման աշխատանքների իրականացումն ազատ է եղել շինություններից, ինժեներական ենթակառուցվածքներից:

Նախագծվող տարածքը իրենից ներկայացնում է Մոնթե Մելքոնյան փողոցից աճող ռելիեֆ, որի բացարձակ նիշը փողոցին կից հատվածում 969-970 մ է, իսկ ռելիեֆի բարձր հատվածում կազմում է 983.80 մ:

Ելնելով ռելիեֆի ընձեռնած հնարավորությունից, բարձրահարկ շենքը տեղադրվել է հնարավորինս հետ (35մ) փողոցին զուգահեռ: Այդ կոմպոզիցիայից ելնելով տարածքը բաժանվել է երկու հատվածների՝ բակային տարածք և հետ ընկած բնակելի շենք: Ելնելով ռելիեֆի ընձեռնած հնարավորությունից, բարձրահարկ շենքը տեղադրվել է հնարավորինս հետ (35մ) փողոցին զուգահեռ: Այդ կոմպոզիցիայից ելնելով տարածքը բաժանվել է երկու

հատվածների՝ բակային տարածք և հետ ընկած բնակելի շենք: Բակային տարածքը գտնվելով շենքի և փողոցի միջև հնարավորություն է ստեղծում բնակարանները պաշտպանել աղմուկից: Բակային տարածքում նախատեսված է կամաչապատել բարձր և սաղարթախիտ ծառատեսակներով: Նախատեսված է կաթիլային ոռոգման համակարգ: Բակային տարածքում նախատեսված է ունիվերսալ հրապարակ՝ թենիս, բասկետբոլ, մինի ֆուտբոլ և այլն:

Բնակարանների շքամուտքերը նախատեսված է ռելիեֆի բարձր հատվածից, որի մոտեցումը իրականացվում է Մոնթե Մելքոնյան փողոցից սկիզբ առնող նախագծային փողոցից, որը կապվում է Կիլիկիա թաղամասի հետ:

Ելնելով ռելիեֆի նիշերի տարբերությունից, բնակարանի երկկողմ տեսանելիությունից 0.00 նիշը ընտրվել է (0.00=987.00) բացարձակ նիշ, որից վերև նախատեսված է բնակելի, իսկ հինգ հարկ ներքև, որը մասսամբ մխրճված է ռելիեֆի մեջ, նախատեսվում է հասարակական նշանակության ֆունկցիաներ, օժանդակ սենյակներ և ավտոկանգառներ:

Ավտոկայանատեղին նախատեսված է 5 հարկերում, երկու առանձնացված մուտք և ելքերով, համապատասխանաբար -9.90 և -16.50 նիշերից: Ավտոկայանատեղիները նախատեսված են 153 մեքենայի համար, յուրաքանչյուր հարկում՝ 1250-1500 մ/քառ ընդհանուր մակերեսով: Հարկերը միմիանց հետ կապվում են թեքահարթակներով: Ավտոկայանատեղիում նախատեսված են նաև ազդանշանային և վթարային լուսավորություն՝ այն ամենը ինչ անհրաժեշտ է անվտանգ շահագործելու համար: Հատակները նախատեսվում են ինքնալցվող և վրան գծանշումով առանձնացված մեքենաների կայանատեղերը և շարժման ուղղությունները: Ավտոկայանատեղերի հարկերում նախատեսված են ծխահեռացման, օդափոխման և հրդեհաշիջման սպինկլերային համակարգեր:

-23.10 նիշում նախատեսված է ջրամբար, մոտ 260 մ/խոր. ջրի ծավալով, որը նախատեսված է խմելու և հրդեհաշիջման համար:

-1 և -2 հարկերում, որոնք համապատասխանում են -3.30 և -6.60 նիշերին նախատեսվում են գրասենյակային տարածքներ, համապատասխանաբար 815 և 856 մ/քառ մակերեսներով: Այդ գրասենյակային ծավալները միմիանց հետ կապվում են առանձին զույգ աստիճաններով:

Մոնթե Մելքոնյան փողոցի նիշից, 5 հարկ բարձրությամբ, որին համապատասխանում է 0.00 նիշը, գտնվում է առաջին բնակելի հարկը: Բնակելի հատվածը նախատեսված է երկու շքամուտքով, յուրաքանչյուրում նախատեսված է 1 աստիճանավանդակ և 2 վերելակ:

Առաջինից մինչև 10-րդ հարկ, յուրաքանչյուր հարկում նախատեսված է 5 բնակարան՝ երեք 2-սենյականոց (58.8, 67.5 և 78.7մ/քառ) ընդհանուր մակերեսով, մեկ 3-սենյականոց (116.8մ/քառ) և մեկ 4 սենյականոց (121.8մ/քառ) ընդհանուր մակերեսով: 11-ից 14-րդ հարկերում նախատեսված է մեկ 2-սենյականոց (67.5մ/քառ), մեկ 3-սենյականոց (114մ/քառ), երկու 4-սենյականոց (118 և 132 մ/քառ մակերեսով) և մեկ 5-սենյականոց (180 մ/քառ ընդհանուր մակերեսով): 17-րդ հարկում նախատեսված է երկու 5-սենյականոց (258 և 266 մ/քառ մակերեսով), և մեկ 6-սենյականոց (318 մ/քառ ընդհանուր մակերեսով): Այս բնակարանների համար նախատեսված են մեծ տերրասաներ:

Միջանցքները և աստիճանները նախատեսվում են երեսապատել գրանիտե սալիկներով, իսկ գրասենյակային տարածքները՝ լամինատե հատակներով: Ամբողջ կառույցը

նախատեսված է երեսապատել կերամիկական սալերով (օդափոխվառող ճակատի սկզբունքով):

Մինչև 0.00 նիշը նախատեսված է երեսապատել տրավերտինե սալերով ($d=30$ մմ): Կողային եզրային ճակատները նույնպես նախատեսված է երեսապատել տրավերտինե սալերով, 17-րդ և 18-րդ հետ ընկած հարկերը նախատեսված է երեսապատել սև տուֆի սալերով: 16-րդ հարկից մինչև 18-րդ հարկ ձգվող շրջանակները նախատեսված է իրականացնել սպիտակ բարձր որակի սվաղով:

Ելնելով ռելիեֆի ընձեռնած հնարավորությունից, բարձրահարկ շենքը տեղադրվել է հնարավորինս հետ (35մ) փողոցին զուգահեռ: Այդ կոմպոզիցիայից ելնելով տարածքը բաժանվել է երկու հատվածների՝ բակային տարածք և հետ ընկած բնակելի շենք: Բակային տարածքը գտնվելով շենքի և փողոցի միջև հնարավորություն է ստեղծում բնակարանները պաշտպանել աղմուկից: Բակային տարածքում նախատեսված է կամաչապատել բարձր և սաղարթախիտ ծառատեսակներով: Նախատեսված է կաթիլային ռոռզման համակարգ: Բակային տարածքում նախատեսված է ունիվերսալ հրապարակ՝ թենիս, բասկետբոլ, մինի ֆուտբոլ և այլն:

Բնակարանների շքամուտքերը նախատեսված է ռելիեֆի բարձր հատվածից, որի մոտեցումը իրականացվում է Մոնթե Մելքոնյան փողոցից սկիզբ առնող նախագծային փողոցից, որը կապվում է Կիլիկիա թաղամասի հետ::

Ելնելով ռելիեֆի նիշերի տարբերությունից, բնակարանի երկկողմ տեսանելիությունից 0.00 նիշը ընտրվել է (0.00=987.00) բացարձակ նիշ, որից վերև նախատեսված է բնակելի, իսկ ներքև հինգ հարկ, որը մասսամբ մխրճված է ռելիեֆի մեջ, նախատեսվում է հասարակական նշանակության ֆունկցիաներ, օժանդակ սենյակներ և ավտոկանգառներ:

Ավտոկայանատեղին նախատեսված է 5 հարկերում, երկու առանձնացված մուտք և ելքերով, համապատասխանաբար -9.90 և -16.50 նիշերից: Ավտոկայանատեղիները նախատեսված են 153 մեքենայի համար, յուրաքանչյուր հարկում 1250-1500 մ/քառ ընդհանուր մակերեսով: Հարկերը միմիանց հետ կապվում են թեքահարթակներով: Ավտոկայանատեղիում նախատեսված են նաև ազդանշանային և վթարային լուսավորություն՝ այն ամենը ինչ անհրաժեշտ է անվտանգ շահագործելու համար: Հատակները նախատեսվում են ինքնալցվող և վրան գծանշումով առանձնացված մեքենաների կայանատեղերը և շարժման ուղղությունները: Ավտոկայանատեղերի հարկերում նախատեսված են ծխահեռացման, օդափոխման և հրդեհաշիջման սպիներային համակարգեր:

-23.10 նիշում նախատեսված է ջրամբար, մոտ 260 մ/խոր. ջրի ծավալով, որը նախատեսված է խմելու և հրդեհաշիջման համար:

-1 և -2 հարկերում, որոնք համապատասխանում են -3.30 և -6.60 նիշերին նախատեսվում են գրասենյակային տարածքներ, համապատասխանաբար 815 և 856 մ/քառ մակերեսներով: Այդ գրասենյակային ծավալները միմիանց հետ կապվում են առանձին զույգ աստիճաններով:

Մոնթե Մելքոնյան փողոցի նիշից, 5 հարկ բարձրությամբ, որին համապատասխանում է 0.00 նիշը, գտնվում է առաջին բնակելի հարկը: Բնակելի հատվածը նախատեսված է երկու շքամուտքով, յուրաքանչյուրում նախատեսված է 1 աստիճանավանդակ և 2 վերելակ:

Շենքի արտաքին հարդարումը նախատեսվում է իրականացնել կախովի երեսապատումով, իսկ արտաքին պատերը՝ ջերմամեկուսացված են: Արտաքին պատուհանները և դռները նախատեսված են հրակայուն և ամրակայուն ապակիներից:

Պատերը նախատեսվում են իրականացվել պեմզաբլոկներով, արտաքինից երեսապատումը բազալտե և տուֆե սալերով, ցեմենտբորդով: Ծածկերը Ե/Բ միաձույլ սալեր են, միջնորմները՝ պեմզաբլոկ, գիպսասովարաթուղթ: Տանիքը՝ հարթ-համատեղված, ճկուն փաթեղացային ծածկույթով և կազմակերպված ջրահեռացումով: Հատակները նախատեսվում է կառուցել բոլոր միջհատակային հաղորդագծերը տեղադրելուց հետո:

Տանիքը հարթ է՝ կազմակերպված ներքին ջրահեռացումով:

Բնակելի մասնաշենքերը գազաֆիկացվելու են: Կաթսայատուն չի նախատեսվում: Շենքի բնակարանների ջեռուցումը և տաք ջրի մատակարարումն իրականացվելու են անհատական եղանակով:

Մասնաշենքերի հարկայնության համար գործող շինարարական նորմերի պահանջների համապատասխան, բնակարանների ելքերը նախատեսված են առաջին տիպի չծխացող աստիճանավանդակների միջոցով:

Բնակելի հարկերի ընդհանուր օգտագործման միջանցքներից սարքավորված կլինեն ծխահեռացման համակարգով: Բնակարաններում նախատեսված են ինքնաշխատ ծխային հրդեհային ազդարարարման սարքերով:

Միջանցքներից ծխահեռացումը նախատեսվում է իրականացնել մեկ ժամից ոչ պակաս հրակայունության սահման ունեցող նյութերից պատրաստված հատուկ հորաններով, ծխի հարկադիր արտածումով, ինչը կատարվում է բոլոր հարկերում տեղադրված ծխահեռացման կափույրների միջոցով:

Նախատեսվում է հակահրդեհային հիդրանտ արտաքին հրդեհաշիջման համար: Այն տեղադրված է մայրաքաղաքի այդ հատվածով անցնող մագիստրալի վրա, կառուցվող շենքից մոտ 20 մ հեռավորությամբ: Ներքին հրդեհաշիջման համար հարկերում՝ հակահրդեհային կանգնակների վրա, համապատասխան խորշերում տեղադրվում են հակահրդեհային արկղեր, որոնցից յուրաքանչյուրի մեջ կանգնակի վրա տեղադրում է փական հակահրդեհային ծորակով, ռետինե խողովակ, հրշեջ փող և 2 ձեռքի կրակմարիչներ: Հակակրդեհային ծորակները տեղադրվում են ելնելով յուրաքանչյուր կետում 1 ջրի շիթ ապահովելու պայմանից: Բացի դրանից, շենքում նախատեսված է մոտ 250մ³ ծավալով ջրի լրացուցիչ ռեզերվուար (ստորգետնյա հարկում՝ կահավորված հակահրդեհային պոմպերով), որն հիմնականում նախատեսված է հակահրդեհային նպատակներով օգտագործելու համար: Միաժամանակ ավտոկայանատեղիում նախատեսված է սպրինկլերային հրդեհաշիջման ավտոմատ համակարգ: Նախագիծը սահմանված կարգով ներկայացվել է նաև «ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին»-ի քննարկամըր և ստացվել է հրդեհային անվտանգության պահանջներին համապատասխանության գրություն, որի պատճեն ներկայացված է սույն հայտի Հավելված 5-ում:

Վերելակները շենքում չորսն են՝ 2-ական 400 և 2-ական 1000 կգ բեռնաբարձությամբ: Շենքն ունենալու է 2 աստիճանավանդակ: Յուրաքանչյուր աստիճանավանդակում

նախատեսված է 2 վերելակ: Վերելակները սահմանված կարգով կենթարկվեն փորձաքննության հետազայում՝ մոնտաժման փուլում, էլնելով վերջնական ընտրվելիք վերելակների մոդելներից և տեխնիկական պարամետրերից:

Մեքենաների մուտքը ստորգետնյա ավտոկայանատեղի նախատեսված է երկկողմանի՝ բաց թեքահարթակներով, լուսացույցային կարգավորումով:

Նախագծով նախատեսված է արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ:

Բնակարանների մակերեսները և հատակագծային լուծումները համապատասխանում են պատվիրատուի կողմից տրված առաջադրանքին:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված սեյսմիկ - III գոտու համար (9 Բալ և ավելի):

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Ինժեներական ցանցերի միացումն իրականացվելու է նշված ծառայությունները մատուցող կազմակերպությունների կողմից տրամադրված տեխնիկական պայմաններին համաձայն /ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում/:

Համալիրի ջրամատակարարումն իրականացվելու է Մոնթե Մելքոնյան փողոցով անցնող քաղաքային ջրատարից, կոյուղին կմիացվի նույնպես Մոնթե Մելքոնյան փողոցով անցնող քաղաքային կոյուղատարին:

Նախագիծը մշակված է համաձայն ՀՀ տարածքում գործող հետևյալ նորմատիվային փաստաթղթերի՝

Բոլոր շինությունների շինարարական աշխատանքներն իրականացնվելու են միաժամանակ: Ըստ նշված բնութագրի ՄՆԻՊ 1.04.03-2008-ի նորմատիվներով նշված աշխատանքների իրականացումը հաշվարկված է 24 ամիս: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական:

ՀՀՇՆ 30-01-2014 քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում

ՀՀՇՆ 31-01-2014 Բնակելի շենքեր. Մաս1 .Բազմաբնակարան Բնակելի Շենքեր

ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի Եվ Շինությունների Հրդեհային Անվտանգություն

ՀՀՇՆ IV-11.03.03-02 Ավտոկայանատեղեր

Կառուցապատման վերաբերյալ ընդհանուր ցուցանիշները բերված են ստորև:

2.2. Կառուցվող համալիրի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներ

- Հողամասի մակերեսը 3392 մ²,
- Կառուցապատման մակերեսը 2072 մ², որից`/ասֆալտապատ և սալիկապատ հատվածներ/ - 747 մ²
- կանաչապատ մակերես - 1320 մ²
- Շինարարական մակերես այդ թվում`
/վերգետնյա հարկերի, բնակելի և հասարակական/ - 20400քմ
- Բնակարանների քանակ-120 հատ
- Ստորգետնյա ավտոկայանատեղի 4 հարկ` 153 հատ ավտոմեքենայի համար:
- Բնակելի ընդհանուր մակերես 15 հարկ` 18000 քմ:
- Հասարակական բազմաֆունկցիոնալ կառույց 2 հարկ` 2400քմ:

2.3. Կանաչապատում և բարեկարգում

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման մակերեսը կկազմի ընդհանուր հողամասի 40%-ը /մոտ 1320 մ² մակերեսը/, մնացածը կկազմի կառուցապատումը, ներառյալ` սալվածքները, ասֆալտապատումը և սպասարկման տարածքները: Կանաչապատման համար նախատեսվում է օգտագործել պահեստավորված 200իսմ բուսահողը, նաև բերել 500իսմ ծավալով բուսահող: Բերրի հողի հզորությունը /շերտը/, որը կազմում է 5 – 10 սմ, հանդիպում է տեղ-տեղ: Կանաչապատման աշխատանքների համար բուսահողի ձեռք բերումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով` համաձայնեցված Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատումը ևս կիրականացվի կանաչապատման և բարեկարգման պլաններին համապատասխան մշակված և Երևանի քաղաքապետարանի հետ 02.09.2020թ-ին համաձայնեցված դենդրոնախագծի համաձայն:

Կանաչապատումը ներառում է` սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար համաձայն դենդրոնախագծի, օգտագործվելու է թխկի կարմիր – 2 հատ, սովորական եղևնի – 7 հատ, գնդաձև իլենի – 9 հատ, լացող ուռենի – 5 հատ, կատալպա – 6 հատ, հուդայածառ – 6 հատ, սյունաձև թույա – 6 հատ, փովոդ գիհի – 5 հատ, ձիակասկ – 5 հատ, դրախտածառ – 8 հատ, սակուռա – 1 հատ, ասպիրակ – 13 հատ, բարբարիս – 12 հատ, սամշիտ – 120գծմ, կուսախաղող – 40 մ², սիզամարգ – 1280 մ² և թզուկ վարդեր - մ²: Այս տեսակները հարմար են Երևանյան լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին: Երևանյան լանդշաֆտում ծառերի կաչողականությունն ապահովվելու է պարտադիր ռոտզման և խնամքի պայմաններում, որի իրականացման պատասխանատուն հանդիսանում է կառուցապատողը:

Ոռոգումն իրականացվելու է նոր կառուցվող ռոտզման ցանցի միջոցով: Ամբողջ հողամասը կունենա ռոտզման ավտոմատ համակարգ:

2.4 Նախապատրաստական աշխատանքներ

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

- Ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- պահեստային և մոնտաժային հարթակների կարգավորում,
- վարչակենցաղային և սանիտարահիգիենիկ տարածքների կարգավորում,
- Ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անիվների լվացման կետի տեղադրում,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների /հրշեջ հիդրանտի տեղադրում/ տեղադրում:

Շինհրապարակը ապահովված կլինի մշտական ջրամատակարարմամբ, որով կապահովվի նաև հակահրդեհային նպատակով ջրամատակարարումը:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

2.5. Հողային աշխատանքներ

Շինարարական աշխատանքների ժամանակ կառուցապատվող տարածքում հողային աշխատանքներից առաջացող հանույթի, մշակվող գրունտի ծավալը ընդհանուր կկազմի 14.500 մ³ որից 3500 մ³ կօգտագործվի հետլիցքի համար, իսկ գրունտի ավելցուկային՝ ծավալը կտեղափոխվի արտոնագրված աղբավայր՝ Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված: Հատկացվող հողամասում նշված գրունտից բուսահողի ծավալը գնահատվել է 200 խմ: Ազդեցության ենթակա բուսահողը կհեռացվի և կպահվի շինարարական հրապարակի տարածքում՝ 2 մ-ը չգերազանցող կույտի ձևով և կծածկվի հատուկ պաշտպանիչ պաստառներով: Հետագայում բուսահողի նշված զանգվածը կօգտագործվի բնակելի թաղամասի կանաչապատման աշխատանքներում:

Շինարարության ընթացքում մշակման ենթակա գրունտերը պատկանում են III, VI կարգի: Գրունտերի մշակումը փոստրակում և խրամուղիներում իրականացվում է “հետ-բահ” էքսկավատորով: Մաքրամշակումը իրականացվում է ձեռքով բանվորական ուժի օգնությամբ: Բնահողի տեղափոխման համար ընտրված է ավտոինքնաթափ 7.5տ բեռնունակությամբ: Հետլիցքի իրականացման համար օգտագործվում են գրունտի փափուկ բնահողերը: Հիմքերի, հարթակների և հատակների հետլիցքը իրականացվում է բանվորական ուժի օգնությամբ:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի շինարարական թափոնները և մնացորդային գրունտները տեղադրվելու են Աջափնյակ վարչական շրջանի՝ Սիլիկյան թաղամասին հարող նախկին քարհանքի տարածքում գործող թափոնների աղբավայր:

2.6 Շինարարական աշխատանքների կատարման սխեմա

<<Խաչհար>> ՄՊ ընկերության կողմից բազմաֆունկցիոնալ համալիրը նախատեսվում է կառուցել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում, Մոնթե Մելքոնյան փողոցի հարևանությամբ: Հատկացվող հողամասի մակերեսը կազմում է 0.339197 հա, իսկ կառուցապատման մակերեսը 2072 մ² է: Մասնաշենքերի հարկայնությունն ընդունված է մինչև 22 հարկ:

Համաձայն կառուցապատման նախագծի մասնաշենքերի հարկայնությունն ընդունված է մինչև 22 հարկ: Տեղանքն, ուր տեղակայված է հողատաճաք, ունի մեծ թեքություն: Շնորհիվ ռելիեֆային առանձնահատկությունների նախատեսված է նկուղային և կիսանկուղային հարկեր: Կառույցը հողամասի ստորին հատակագծային նիշից նախագծվել է մինչև 22 հարկ՝ 18-րդ հարկից հետո նահանջով: Բնակելի հարկերի բարձրությունը հարկից հարկ ընդունվել է 3.30մ: Բնակելի շենքի հարևանությամբ նախատեսված է կառուցել էլեկտրական ենթակայան, էլեկտրաէներգիայի մատակարարման համար:

Ըստ նշված բնութագրի ՀՀՇՆ 1. 04.03-2008-ի նորմատիվներով օբյեկտի կառուցման ընդհանուր տևողությունը կազմում է 24 ամիս:

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է համալիրի շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Շենքի կառուցումն իրականացվում է ավանդական եղանակով, սակայն հաշվի առնելով նեղվածքային պայմանները, մասնավորապես հարող կառույցների և ավտոտնակների առկայությունը պահանջվում է հատուկ ճարտարագիտական լուծումների կիրառում փոստրակի փորման ժամանակ՝ շեպերի կայունացման նպատակով: Առաջարկելի են մետաղական խողովակներով կամ ձողերով նախնական ազուցավորման, լրացուցիչ հենապատի կառուցման եղանակները:

Փոստրակի մշակումն առաջարկվում է իրականացնել KOMATSU PC 450LCD-7 էքսկավատորով, քանի որ մշակվող գրունտի ծավալի հիմնական մասը կազմում են ժայռային գրունտները, որոնց մշակման համար պահանջվում է նախնական փխրեցում:

Յուրաքանչյուր պատող և կրող կոնստուկցիաների իրականացման համար ընտրված է KB-405 մակնիշի աշտարակային կռունկ: Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնն երբ ըստ

ՇՆԵՎԿ III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոստրակի ընդունման ակտ):

Բեռի ուղղահայաց և հորիզոնական տղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ, նշահարելով դեղին գույնով, ապահովել դիսպետչերական կամ մեկ աշտարակային կռունկի գործողության գոտում բացառել կից շենքի աշտարակային կռունկի գործողությունը տվյալ գոտում/: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչներով Երևան քաղաքին կամ Ջրվեժ համայնքին մոտ բետոնաշաղախային հանգույցներից՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը: Այսպիսով՝ կբացառվի հրապարակում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը: Բետոնախառնուրդի առաքումը նպատակահարմար է ՇԵ-69Ե ավտոբետոնախառնիչով, տեղադրումը՝ վերամբարձի, ավտոբետոնապոմպի կամ ստացիոնար բետոնապոմպի միջոցով:

Հրապարակում սորոն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստրուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները՝ հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահապանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:

Հաշվի առնելով տեղանքի պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Կռունկով բեռի տեղափոխումը բացառիկ դեպքերում գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով կատարվում է շինարարության ղեկավարի գրավոր կարգադրությամբ, ապահովվելով բեռի անվտանգ տեղափոխումը, անվտանգության ճարտարագետի մշտական ներկայությունը:

Աշտարակային կռունկի մոնտաժումը ե/բետոնե ծածկի սալի վրա կատարվում է նախագծի կոնստրուկտորի հիմնավորված լրկալ հաշվարկով: Աշտարակային կռունկի մոնտաժման աշխատանքները իրականացվում է համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից ըստ կռունկի անձնագրային տվյալների:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարական հրապարակում չի նախատեսվում շինանյութերի, կամ սորուն նյութերի պահեստներ:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շին. հրապարակը կազմակերպելիս անհրաժեշտ է ղեկավարվել «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քանի որ այս տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ են իրականացվելու շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց զերծ մնալու համար տարածքը մշտապես անհրաժեշտ է ջրցանել ոռոգման ջրով: Չպետք է թույլ տալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ: Շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձրված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցմել աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղի:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

2.7 Շինարարական աշխատանքների տեսակները և նախապատրաստական փուլի ամփոփ նկարագիրը

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ

- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են ժամանակավոր ցանկապատման, պահեստային և մոնտաժային հարթակների կարգավորման, ժամանակավոր ճանապարհների կառուցման աշխատանքները: Բացի դա, իրականացվելու են վարչակենցաղային և սանիտարահիգիենիկ շինությունների, ինչպես նաև ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրման աշխատանքները: Այս աշխատանքներին զուգընթաց կազմակերպվելու է նաև մեքենաների և մեխանիզմների փոխադրում շին. հրապարակ և տեղադրվելու են անվտանգության նշաններն ու հակահրդեհային միջոցները: Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը, իրականացվելու է բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ:

2.8 Շինարարության կազմակերպում

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Շինարարության տևողությունը կազմում է 24 ամիս՝ շինարարության թույլտվության տրամադրման օրվանից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վաճակալել դրանք այլ կազմակերպություններից:

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- Ժամանակավոր ցանկապատի տեղադրում,
- Կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում (ըստ անհրաժեշտության),
- Ժամանակավոր շինությունների տեղադրում,
- Միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Շինարարության ընթացքում բանվորները կսնվեն հատուկ ճաշարան-տնակում, ներգրավված կլինեն ընդհանուր 65 աշխատողներ, որոնցից 15-ը տեխնիկական աշխատողներ են, 50-ը բանվորներ: Շինարարությունը իրականացվելու է ընկերությանը պատկանող մեքենա-մեխանիզմներով.

1. Էքսկավատորներ
2. Ինքնաթափ ավտոմեքենաներ
3. Ավտո և աշտարակային կռունկներ
4. Բետոնախառնիչ ավտոմեքենաներ

Քարերի, մետաղական կոնստրուկցիաների և այլ նյութերի մատուցումը տեղադրման հարթակ իրականացվում է 32տ բեռնատարողություն ունեցող ավտոամբարձիչի օգնությամբ,

որի տեխնիկական պայմանները թույլ են տալիս (առավելագույն 3տ բեռնունակությամբ պլաքի շառավիղը 15մ մասնաշենքի) նոր շինարարության աշխատանքների իրականացումը:

Ամբարձիչի մեքենավարը կարող է դադարեցնել աշխատանքը, եթե կհայտնաբերվեն ամբարձիչի կոնստրուկցիայի ճաքեր և դեֆորմացիաներ, ճուպանի կտրվածք, արգելակման խախտումներ և այլն:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա թեքություն ոչ ավել քան 5°:

Բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը, որոնք օգտագործվում են բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ, պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին: Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն շնկ III-4-80* <Անվտանգության տեխնիկական շինարարության մեջ>:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ հիմնական մեքենաների և մեխանիզմների ցանկը ներկայացված է աղյուսակում:

Աղյուսակ Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ*

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Աշտարակային կցովի վերամբարձ կռունկ	Liebherr 120 HC	1
2	Էքսկավատոր կախովի սարքավորումներով	KOMATSU PC 450LCD-7	1
3	Էքսկավատոր-բուլդոզեր	KOMATSU-450F	1
4	Ավտոմոբիլային կռունկ	KC-5473 Днепр	1
5	Շարժական կոմպրեսոր	ATLAS COPCO XAS97	1
6	Ավտոբետոնապոմպ	SCHWING S36 SX	1
7	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	2
8	Թրթռիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	2
9	Փոխարկիչ թրթռիչների համար	ИБ-4	2
10	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	1
11	Եռակցման տրանսֆորմատոր	ТД-500	2
12	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		4
10	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	2
11	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
12	Ավտոբետոնախառնիչ	СБ69Б	ըստ

Մեքենաների և մեխանիզմների կմը տրված են խորհրդատվական կարգով և կարող են փոխարինվել նույն տեխնիկական պարամետրեր ունեցող այլ մեքենաներով ու մեխանիզմներով

2.9.Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրապահանջը

Բազմաֆունկցիոնալ համալիրի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում կառուցվող բազմաֆունկցիոնալ համալիրի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն:

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման աշխատանքային նախագծի «Ջրամատակարարում և կոյուղի» բաժինն իր մեջ կներառի՝

- Արտաքին և ներքին ջրամատակարարում
- Տարածքի ոռոգում
- Արտաքին և ներքին կոյուղի
- Անձրևաջրերի հեռացման հեղեղատար կոյուղի:

Ջրամիացումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրվող՝ Ջրամիացման, ջրահեռացման, հեղեղատարին միացման և հակահրդեհային հիդրանտի տեղադրման տեխնիկական պայմաններին համապատասխան, համաձայն՝ ջրամիացման, հի հիդրանտի տեղադրման և գոյություն ունեցող կոյուղագծին միացման նախագծային լուծումների:

Ջրամիացումն իրականացվելու է նախագծված տարածքի հարևանությամբ Մոնթե Մելքոնյան փողոցով անցնող 300 մմ ջրագծից: Ջրագծի ջրի ճնշումը 1.0մթն., ջրամատակարարումը շուրջօրյա է: Ջրահեռացման միացման կետը կլինի տարածքի հարևանությամբ անցնող d=700 մմ տրամագծի գործող կոյուղագիծը:

Ջրաչափական հանգույցի և հի հիդրանտի տեղադրման կետերում կառուցվելու է դիտահորեր:

Ջրատարում վթարների և վերանորոգումների ժամանակ ջրամատակարարման անընդհատությունը ապահովելու, ինչպես նաև ներքին հակահրդեհային ջրաքանակ ապահովելու համար նախատեսվում է պահուստային բաքի տեղադրում, որը միաժամանակ կարգավորող դեր կատարում է:

Ներքին տաք, սառը ջրամատակարարում և տաք ջրի շրջադարձ

Բազմաֆունկցիոնալ համալիրի ներքին ջրամատակարարման ցանցերը նախատեսվում է իրականացնել պոլիպրոպիլենե Մ50-15մմ խողովակներով:

Նախագծով նախատեսվում է կենցաղային խմելու և հրդեհաշիջման միասնական համակարգ: Սառը ջրի համակարգից նաև սնում է տրվում օդորակման և օդափոխության սարքավորումներին: Սանիտարական բոլոր սարքերը տաք և սառը ջրամատակարարման համակարգից անջատելու համար տեղադրվում են համապատասխան փականներ:

Նախատեսվում է հակահրդեհային հիդրանտ արտաքին հրդեհաշիջման համար: Ներքին հրդեհաշիջման համար հարկերում՝ հակահրդեհային կանգնակների վրա, համապատասխան խորշերում տեղադրվում են հակահրդեհային արկղեր, որոնցից յուրաքանչյուրի մեջ կանգնակի վրա տեղադրում է փական հակահրդեհային ծորակով, ռետինե խողովակ, հրշեջ փող և 2 ձեռքի կրակմարիչներ: Հակակրդեհային ծորակները տեղադրվում են ելնելով յուրաքանչյուր կետում 1 ջրի շիթ ապահովելու պայմանից:

Տաք ջրամատակարարումը իրականացվում է բնակարաններում նախատեսված կաթսաներից: Ներքին ցանցը մոնտաժվում է պոլիպրոպիլենային խողովակներից:

2.10 Ջեռուցում և գազամատակարարում

Բազմաֆունկցիոնալ համալիրի ջեռուցումը և տաք ջրամատակարարումը բնակարաններում և տարածքներում իրականացվում է անհատական կաթսաների միջոցով: Գազամատակարարումը իրականացվելու է քաղաքային ցանցից՝ տեղադրելով գազամատակարարման բաշխիչ-վահանակ:

Բոլոր մասնաշենքերի գազամատակարարման խողովակներն անցնում են ստորգետնյա հատվածով, շենքի մոտ բարձրանալով մտնում են սանդղավանդակին կից պատշգամբ, որտեղ ամեն հարկում տեղադրված են գազի հաշվիչները բնակարանների համար:

Գազամատակարարումը իրականացվելու է Մոնթե Մելքոնյան փողոցով անցնող միջին ճնշման գազատարից՝ <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմաններին համապատասխան:

2.11 Ներքին և արտաքին ջրահեռացում՝ կոյուղի

Շենքի կոյուղաջրերը կհեռացվեն միասնական ինքնահոս համակարգով՝ կանգնակների միջոցով: Սանիտարական սարքերի միացումը կանգնակներին նախատեսվում է իրականացնել թեք ձևավոր մասերով: Կանգնակները մոնտաժվում են հորաններում և պատերի մեջ փակ համակարգով:

Կոյուղագծի հանգուցային կետերում և անկյունների վրա նախատեսվում են դիտահորեր: Շենքից կոյուղաջրերը կլցվեն կոյուղու երկաթբետոնե դիտահորերի մեջ, որից հետո արտաքին ցանցով միացվում է տարածքում գործող կոյուղագծի դիտահորին՝ համաձայն տեխնիկական պայմանի:

Արտաքին կոյուղագիծը նախատեսվում է իրականացնել պոլիթիլենե Մ150-200մմ խողովակներով:

2.12 Աձրևաջրերի հեռացում /հեղեղատար կոյուղի/

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը նախատեսված է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում

տեղադրվելու են անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը կհեռացվեն տարածքից և համաձայն տեխնիկական պայմանի կմիացվեն քաղաքային հեղեղատար ցանցին:

Նույն ցանցով և կհեռացվի շենքի տանիքներից հավաքվող անձրևաջրերը և օդափոխության, օդորակման սարքավորումներից առաջացած կոնդենսատները: Ցանցը նախատեսվում է իրականացնել պոլիէթիլենե Մ 200-300մմ խողովակներով:

2.13 Նյութերի և բնատեսուրանների օգտագործում

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնատեսուրաններից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար: Շինարարության փուլի ջրամատակարարումն իրականացվելու է տեխնիկական պայմանների համաձայն՝ գոյություն ունեցող ջրատարից, որը միացված է քաղաքային ջրամատակարարման ցանցին: Իսկ կոյուղին միացված է քաղաքային կոյուղատարին: Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը 10լ/վրկ, որը կապահովվի ջրագծից:

Էլեկտրաէներգիայի պահանջարկը շինարարության փուլում կապահովվի ժամանակավոր տրանսֆորմատորային ենթակայանից:

Աղյուսակում ներկայացված են շինարարության ժամանակ անհրաժեշտ ռեսուրսների պահանջարկը՝ հիմնված աշխատանքների ծավալների և կատարման ժամկետների վրա:

Աղյուսակ 2.

NN	Անվանում	Չափման միավոր.	Պահանջարկ
2.	Ջուր Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը	մ ³ /օր	4.45 10 լ/վրկ:
3	Խտացված օդ	Հատ (100լ/ր)	1 կոմպրեսոր
4	Բուսահող	խ/մ	200
	Էլեկտրաէներգիա	Քաշվ, ԿՎա	400.8

Ջրամատակարարման պահանջարկը շինարարության ընթացքում

2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
Տնտեսական/կենցաղային կարիքներ											
Կենցաղային	ԻՏԱ	4	СНиП2/04.85*	0.016	խմելու.	0.064	0.064				
Կենցաղային	բանվ.	8	СНиП2/04.85*	0.025	խմելու.	1.55	1.55				
Դողերի լվացում	Դողերի լվացում	6	ПКТП Промстрой	0.14		0.84				0.84.0	
Բետոնի պատրաստում	Բետոն, մ3	2	ЕНП Н-2-12п.1	0.72		1.44	1.44				
Բետոնի խնամք	ջրում, մ3	15	С401п.163	0.0314		0.47	0.47				
Շինհրապարակի մաքրում	ջրում,մ2	20	ГОСТ 12.3.00 2-75	0.004		0.08	0.08				
Ընդամենը՝						4.45	3.61			0.84	

Շինարարության փուլում բանվորների կենցաղային կեղտաջրերի հեռացման համար շինհրապարակում կնախատեսվի բիոզուգարան:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

3.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

«ԽԱԶՀԱՐ» ՍՊ ընկերության կողմից Մոնթե Մելքոնյան փողոց 16 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիր կառուցման տարածքը գտնվում է Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանում: Համալիրը նախատեսվում է կառուցել արևելքից արևմուտք ռելիեֆային մեծ անկմամբ, կառուցապատումից ազատ 0.339197 հա մակերեսով հողամասում: Նախագծվող տարածքը իրենից ներկայացնում է Մոնթե Մելքոնյան փողոցից աճող ռելիեֆ, որի բացարձակ նիշը փողոցին կից հատվածում 969-970 մ է, իսկ ռելիեֆի բարձր հատվածում կազմում է 983.80 մ:

Կառուցապատվող հողամասը գտնվում է Մոնթե Մելքոնյան փողոցի անմիջապես հարևանությամբ, Ծովակալ Իսակովից 650 մ հեռավորության վրա, Ծովակալ իսակով և Մոնթե Մելքոնյան տրանսպորտային հանգույցի հյուսիս արևմտյան մասում, հանգույցից 650 մ հեռավորության վրա: Տարածքին կից, ներկա պահին կառուցապատումից ազատ այլ հողամասեր են:

Հողամասը ազատ է կառուցապատումից, արևելքից արևմուտք ունի ռելիեֆային մեծ անկում: Հողամասի ռելիեֆային առանձնահատկությունից ելնելով նախատեսված են նկուղային և կիսանկուղային հարկեր, որոնցում նախատեսված են ավտոկայանատեղիներ:

3.2 Ռելիեֆը

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում: Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասն ունի մեծ թեքություն, որի շնորհիվ կառուցապատումն իրականացվում է հարթակների վրա:

Ընդհանուր առմամբ Մալաթիա Մեքաստիա վարչական շրջանի տարածքում գեոմորֆոլոգիական պայմանները բավական բարդ են: Ռելիեֆի հիմնական տարրերն են Կոտայքի և Ջրվեժ-Ջրվեժի հրաբխային սարավանդների լանջերը, ինչպես նաև Գետառ գետի կիրճի գառիթափ լամջերը:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Ըստ ձևաբանական առանձնահատկությունների տարածքը հանդիսանում է սարավանդի մի մասը՝ քաղաքի ամենաբարձր հատվածներից մեկն, որի մակերևույթը թեք աստիճանաձև է: Սարավանդը երեք կողմից ուղղաձիգ և մեծ թեքության լանջերով իջնում է դեպի հարևան իջվածքները:

3.3 Կլիման

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է <<տաք>> կլիմայական գոտում: <<Տաք>> գոտու կլիմայական բնութագրերն են՝ ամառ՝ շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 21 °C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին)՝ 35% ցածր, բարենպաստ լեռնահովտային քամիներ՝ միջին արագությունը 2,0-3,0 մ/վ : Ձմեռ՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0 °C-ց մինչև մինուս 5 °C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին) 60-70%, քամու միջին արագությունը՝ 2,0-3,0 մ/վ:

Դիտարկվող տարածքին ամենամոտը տեղակայված է Էրեբունի օդերևութաբանական կայանը, որի տվյալներով քամու փչելու ուղղությունը տատանվում է և գերակա ուղղություն չկա: Հյուսիս- արևելյան և հարավ-արևելյան քամիները ավելի շատ են ապրիլին, հարավ-արևմտյան քամիները՝ հունիսին, հյուսիս-արևելյան քամիները՝ հուլիսին և հյուսիս արևելյանը՝ հուլիսին, հարավ արևելյան քամիները՝ հոկտեմբերին:

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նախնական գնահատման հայտ

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերև- ութաբ. կայանը	Բարձրությունը ծովի մակար- դակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարե- կան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելա- գույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Էրեբունի	888	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-2.8	42

Աղյուսակ 2.2 Օդի հարաբերական խոնավությունը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերև- ութաբ. կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Էրեբունի	888	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	67	28

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթը, մմ	
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը, մմ	Տարվա ձնածածկույթի օրերը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Էրեբունի	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	58	47
	24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51		

Աղյուսակ 2.4. Քամու պարամետրերը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նախնական գնահատման հայտ

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անհողմությունների հասնելիությունը %	Միջին ամսական արագություն մ/վ	Միջին տարեկան արագություն մ/վ	Ուժեղ քամիներով (ՈՒ5, մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ անցնել		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
															16	17	18
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Էրեբունի	912.1	Հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0.7	1,5	29	22	27	29
			2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7							
		Ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45	1,9					
			3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6							
		Հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36	2.8					
			5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3							
Հոկտեմբեր	6	17	10	10	21	20	10	5	63	1,0							
	2,9	2,5	2,1	2,5	2,3	2,4	2,9	3,5									

3.4. Տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները

Իրականացվել է տարածքի երկրաբանական հետազոտություն, ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը: Իրականացվել են հարակից տարածքներին վերաբերվող տարբեր աղբյուրներում առկա ինժեներաերկրաբանական տվյալների համադրում և վերլուծություն:

Նախագծվող բարձրահարկ շենքի մեկ անկյունում կատարվել է 45մ. Խորությամբ (970 նիշից) հորատման աշխատանքներ և լաբորատոր ուսումնասիրություն: Այն մանրամասն ներկայացված է երկրաբանական հաշվետվությունում:

Համաձայն տարածքի համար կատարված երկրաֆիզիկական հետազոտության արդյունքի տարածքը համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 նորմերի՝ աղյուսակ 3-ի համապատասխանում է սեյսմիկ առաջին կարգի գրունտին (մանրամասն ներկայացված է հաշվետվությունում):

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխ-նստվածքային ֆրակցիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Լիթոլոգիական տեսակետից տարածքում կարելի է առանձնացնել հետևյալ երկրաբանական տարբերակները՝

1. Ժամանակակից այրովիալ-պրոյուվիալ գրունտեր, ներկայացված գորշ կավավազով ամուր կազմության, փթաց բույսերի մնացորդներով և արմատներով:

2. Մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

3. Մեծաբեկորային գրունտ, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են մինչև 10% կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով:

4. Վերին չորրորդական լճա-այրովիալ նստվածքներ ներկայացված Խճա-մանրախճային գրունտներով մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30 -35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների հետևյալ տարատեսակները՝

- Ժամանակակից այլուվիալ-պրոյուվիալ գրունտեր
- Լիցքային գրունտ
- Խոշորա-բեկորային գրունտներ

Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է, քանի որ ստորգետնյա ջրերը տեղադրված են մակերեսից 5մ-ից ցածր: Ստորգետնյա ջրերը կապված են միջլավային և լավաների տակ գտնվող հոսքերի հետ, ունեն ինֆիլտրացիոն բնույթ:

3.5 Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Տարածքի սեյսմատեկտոնական պայմանները բարդ են: Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի կառուցապատման համար նախատեսված տարածքի տեղամասի գրունտների հորիզոնական առավելագույն արագացումների և գերակայող պարբերությունների գնահատման համար հիմք է ընդունվել ՀՀՇՆ II-6.02-2006 <<Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր>> նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտևորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Սպառվող առավելագույն հորիզոնական արագացումները գտնվում են 0.25-0.45 g սահմաններում (8.25-9 և ավելի բալ), ընդ որում տարածքի գերակշռող մասի գրունտների արագացումները տատանվում են 0.3-0.35 g սահմաններում:

3.6 Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվական կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիթորինգ) կողմից: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայան-ներում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի օքսիդի, փոշու և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

2019թ. 1-ին եռամսյակում անշարժ դիտակայաններում կատարվել է մթնոլորտային օդի 49177 ավտոմատ դիտարկում, վերցվել է ակտիվ նմուշառման 1669 փորձանմուշ, իսկ շարժական դիտակետերից պասիվ նմուշառման 1054 փորձանմուշ:

Որոշված ցուցանիշների տարեկան միջին կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ):

Աղյուսակ 2.5. Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները (ակտիվ նմուշառում)

Որոշվող միացություն	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի)	ՄԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ ³	ՄԹԿ միջին օրական, մգ/մ ³
		>1 ՄԹԿ	>5 ՄԹԿ		
Ծծմբի երկօքսիդ	0.079 (դիտ. N2)	79	0	0.029	0.05
Ազոտի երկօքսիդ	0.185 (դիտ. N18)	289	0	0.022	0.04
Ընդհանուր փոշի	0.960 (դիտ. N18)	705	13	0.143	0.15
Գետնամերձ օզոն	0.095 (դիտ. N8)	19	0	0.008	0.03

3.7 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիթորինգի կողմից: Երևանի տարածքում հիմնական ջրային ռեսուրս է հանդիսանում Հրազդան գետը իր Գետառ վտակով:

ՀՀ կառավարության կողմից՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում): ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական՝ մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Ըստ Էկոմոնիթորինգի 2018 թվականի տարեկան տեղեկանքի Հրազդան գետի ներքին հոսանքներում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս): Վատ որակը պայմանավորված է լուծված

թթվածնի, ԹԿՊ₅, ամոնիում իոնի, ֆոսֆատ իոնի, մանգանի, վանադիումի, ընդհանուր ֆոսֆորի բարձր պարունակությամբ:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ նախատեսվող գործունեության տարածքը Հրազդան գետի մոտակա հատվածից գտնվում է ավելի քան 4.5 կմ հեռավորության վրա և չի կարող ազդել գետի վրա:

3.8 Հողային ռեսուրսներ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սննդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավագոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով:

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ավալիացած աղակալած:

Ներկայացվող տարածքում հողային ծածկույթն արդեն իսկ խախտված է շինարարական աշխատանքներից: Կառուցապատվող տարածքում տարածված են կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային հողերը, որտեղ բուսածածկը և հողածածկը հանդիպում են տեղ-տեղ և հզորությունը 5-10սմ է, որի համար ՀՀ օրենսդրությամբ չեն սահմանվում պահման նորմեր:

Դիտարկվող տարածքում հողերի ձևավորման պրոցեսն ընթանում է հրաբխային ապարների՝ բազալտների, տուֆերի, հողմահարման նյութերի վրա: Նրանց վրա ձևավորվում են բաց գորշագույն հողեր: Հողային ծածկույթի հզորությունը միջին հաշվով կազմում է 10 - 20 սմ, որից ներքև տարածվում է կրակավի տեսքով մանրացված լեռնային ապարը: Հողերը հիմնականում ունեն կավավազային կամ ավազակավային մեխանիկական կազմ:

Հողային աշխատանքների ժամանակ, գրունտի մշակման աշխատանքներից առաջացող հողային հանույթը կուտակվելու են կազմակերպված շինարարական հրապարակի տարածքում, հետագայում օգտագործվելու հետլիցքի, կամ տարածքների հարթեցման համար:

Համաձայն Երևանի գլխավոր հատակագծի քաղաքի տարածքը աղտոտված է ծանր մետաղներով և մասամբ՝ ռադիոնուկլիդներով: Ըստ ծանր մետաղներով աղտոտվածության քաղաքի տարածքը ներկայումս վերագրվում է միջին աղտոտվածության տարածքներին: Մակայն քաղաքի տարածքում առանձնանում են նաև ուժեղ աղտոտված տարածքներ: Պետք է նշել, որ դիտարկվող տարածքը աղտոտված չէ:

3.9. Կենսաբազմազանություն

Տարածքը գտնվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի խառը կառուցապատման գոտում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները: Տարածքում բուսածածկույթը և հողային ծածկույթը բացակայում են: Քարքարոտ, ավազային, հողածածկույթի վրա տեղ-տեղ վայրի թփերեն են, կամ խոտաբույսեր:

Ստորև բերված է Երևան քաղաքի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տեղեկատվությունը:

3.9.1 Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանյան գոգավորությունը տեղաբաշխված ծովի մակերևույթից 860-1390մ բարձրությունների սահմաններում: Երևանյան գոգավորությունում առկա են հարթավայրային լանդշաֆտային և լավային սարավանդներ, որոնք բաղկացած են կիսաանապատային և նախալեռնային գոտիներից: Երևանի դիտարկվող տարածքում, որտեղ իրականացվելու է նախատեսվող գործունեությունը գերիշխում են լավային սարավանդները, իսկ հարավային լանդշաֆտները՝ Հրազդան և Գետառ գետերի սելավաբերուկ հողատարածքներն են: Երևան քաղաքը գտնվելով ջրագուրկ կիսաանապատային գոտում ընդերքում ունի հարուստ ջրատար շերտեր՝ խորքային ջրեր:

Երևան քաղաքի տերիտորիան Անդրկովկասի ամենաչորային շրջաններից մեկն է, կլիման այստեղ խիստ ցամաքային է, կիսաանապատային: Երևանում ցածր է նաև օդի հարաբերական խոնավությունը, որը ամռան ամիսներին իջնում է մինչև 40%-ի: Երևանում հաճախակի նկատվում է կարճ գարուն, որը բացասական ազդեցություն է ունենում ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչների վրա:

Երևանի հողերը տիպիկ գորշ կիսաանապատային են, աղքատ աննդանյութերով, հարուստ կարբոնատներով, սակավազոր, կավավազային, կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ, շերտաթեփուկավոր կամ փոշեհատիկային կազմությամբ, քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով: Հազարամյակների ընթացքում արհեստական ոռոգման տարբեր տեսակի ագրոմիջոցառումների պարագայում Երևանի տարածաշրջանում առաջացել են կուլտուր-ոռոգելի զգալի հողատարածքներ, որոնք վերածվել են տարբեր տիպի փարթամ կուլտուրական լանդշաֆտների:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում

ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1. Ֆրիգանա (ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Պետք է նշել, որ գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված են և օգտագործվում են մարդու կողմից:

3.9.2. Կենդանական աշխարհ

Շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Համայնքի տարածքում տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրաույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սիստորագորտը, կանաչ դողոզը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատու սցինկը, օձերից՝ կույր օձուկը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր: Հրագդան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

Ուսումնասիրվող տարածքը չի առնչվում Մալաթիա-Մերաստիա վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, բնության հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների, կամ կենսաբազմազանության տեսակների հետ:

3.10 Սոցիալ տնտեսական պայմանները

Ներկայացվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում:

Ստորև բերված են Երևան քաղաքի որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից¹:

Աղյուսակ 2.5. Երևանի ընդհանուր ցուցանիշները

N	Տարածքը	223 քառ. կմ
1	ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը	0.7 %
2	Գյուղատնտեսական նշանակության հողեր	3 351.2 հա
3	այդ թվում՝ վարելահողեր	915.6 հա
4	Վարչական շրջաններ	12
5	Բնակչության թվաքանակը 2015թ. տարեվերջի դրությամբ	1 073.7 հազ. մարդ
6	ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2015թ.	35.8 %

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Մահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատախիզանական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

¹ www.armstat.am

2017թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

Աղյուսակ 2.6 Երևանի տնտեսության համամասնական տվյալները

✓ արդյունաբերություն`	41.2%,
✓ գյուղատնտեսություն`	1.1%,
✓ շինարարություն`	63.7%,
✓ մանրածախ առևտուր`	76.4%
✓ ծառայություններ`	81.4%:

Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են ամբողջ հանրապետության կապն արտաքին աշխարհի հետ):

Աղյուսակ 2.7. Սոցիալական ցուցանիշներ

<i>Սոցիալական ցուցանիշը</i>	<i>Ընդամենը</i>	<i>Կանայք</i>	<i>Տղամարդիկ</i>
Զբաղվածներ, հազ. մարդ	294.3	144.3	160.0
Ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, հազ.մարդ	168.9	104.4	64.5
Աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	17076	-	-

ՄալաթիաՍեբաստիա վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ, Կենտրոն, Շենգավիթ վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի և Արմավիրի մարզերին:

Աղյուսակ 2.8. Ազդակիր վարչական շրջանը

<i>Վարչական շրջան</i>	<i>Տարածքը, հա</i>	<i>Բնակչության թվաքանակը 2016 թ. տարեվերջին, հազ.մարդ</i>
Մալաթիա-Սեբաստիա	2516	142 600

Երևան քաղաքի շրջակա միջավայրի պահպանության համաքաղաքային լուծումներն անմիջականորեն կապված են Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի և նրա շրջակա միջավայրի վիճակի բարելավման հետ:

Ընդհանուր առմամբ քաղաքի դիտարկվող վարչական շրջանում տեղ են գտել բազմազան հողօգտագործման ձևեր՝ բնակելի կառուցապատում, արդյունաբերական արտադրության համար նախատեսված գոտիներ, հատուկ նշանակության հողեր, հասարակական նշանակության կանաչ զանգվածներ, լանդշաֆտային գոտի, կոմերցիոն բնույթի օբյեկտներով կառուցապատված գոտի:

Երևան քաղաքի Մալաթիա Մեքաստիա վարչական շրջանի շրջակա միջավայրի համար խիստ բացասական հետևանքներ է ունեցել էներգետիկ ճգնաժամի տարիներին վարչական շրջանի անտառային զանգվածի ոչնչացումը, որը հանգեցրել է միկրոկլիմայի վատթարացմանը, օդի աղտոտիչների կլանման նվազեցմանը, օդում բնական ծագման փոշու պարունակության ավելացմանը, ախտածին պրոցեսների ակտիվացմանը և այլն:

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի շրջանակներում կատարված գնահատականների համաձայն Մալաթիա Մեքաստիա վարչական շրջանը բնապահպանական առումով պատկանում է քաղաքի համեմատաբար բարենպաստ շրջաններին:

Վարչական շրջանի մթնոլորտային օդի աղտոտման աղբյուրներն են հանդիսանում հասարակական հատվածում գործող ջեռուցման կաթսայատները, գազիֆիկացված բնակելի տների (առանձնատների) և բազմաբնակարան տների ներսենքային ջեռուցման գազի կաթսաները և վառարանները:

Ընդհանուր առմամբ քաղաքի դիտարկվող վարչական շրջանում տեղ են գտել բազմազան հողօգտագործման ձևեր՝ բնակելի կառուցապատում, արդյունաբերական արտադրության համար նախատեսված գոտիներ, հատուկ նշանակության հողեր, հասարակական նշանակության կանաչ զանգվածներ, լանդշաֆտային գոտի, կոմերցիոն բնույթի օբյեկտներով կառուցապատված գոտի, բուժառողջարարական հաստատություններ, ուսումնական հատուկ նշանակության օբյեկտներ և այլն:

Երևան քաղաքի շրջակա միջավայրի համար խիստ բացասական հետևանքներ է ունեցել էներգետիկ ճգնաժամի տարիներին վարչական շրջանի անտառային զանգվածի ոչնչացումը, որը հանգեցրել է միկրոկլիմայի վատթարացմանը, օդի աղտոտիչների կլանման նվազեցմանը, օդում բնական ծագման փոշու պարունակության ավելացմանը, արտաքին պրոցեսների ակտիվացմանը և այլն:

Վարչական շրջանի շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն են.

- օդի աղտոտվածությունը անշարժ աղբյուրների (ջեռուցման համակարգերի) և ավտոտրանսպորտի արտանետումներով:
- էլեկտրամագնիսական ճառագայթները (օդային բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերը (ԷՀԳ):
- տրանսպորտային աղմուկը:

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի շրջանակներում կատարված գնահատականների համաձայն, Էրեբունի վարչական շրջանը բնապահպանական առումով պատկանում է քաղաքի առավել աղտոտված շրջանների թվին:

Վարչական շրջանի մթնոլորտային օդի աղտոտման աղբյուրներն են հանդիսանում առաջին հերթին տրանսպորտային միջոցները, արդյունաբերական օբյեկտները, գործարաններ, իրենց ներդրումը ունեն նաև հասարակական հատվածում գործող ջեռուցման կաթսայատները, գազաֆիկացված բնակելի տների (առանձնատների) և բազմաբնակարան տների ներշնչային ջեռուցման գազի կաթսաները և վառարանները:

Վարչական շրջանում իրականացվում է մթնոլորտային օդի աղտոտվածության մոնիթորինգ:

Մինչև 2020 թ վարչական շրջանի սահմաններում նախատեսվում է հիմնադրել և ընդլայնել ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկներ (անտառպուրակներ, զբոսայգիներ) մակերեսները և բնակչության ապահովվածությունը նշված ֆունկցիոնալ նշանակության կանաչ տարածքներով հասցնել մինչև 45,69 մ²/մարդ:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների, կամ կենսաբազմազանության տեսակների հետ:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

4.1 Ռիսկերի գնահատում

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոց 16 բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա կորսնորվեն որոշակի բացասական ազդեցություններ, ապա՛յն վերջիններս կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև և պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ`

- Բազմաֆունկցիոնալ համալիրի շինարարության ընթացքում
- Հիմքերի փորման ընթացքում
- Դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:
- Հողային զանգվածների և շինադրի տեղափոխման հետ կապված,
- Շինարարական տեխնիկայի շահագործմամբ,
- Բետոնային աշխատանքների իրականացմամբ,
- Շինհրապարակների տեղադրման և վառելիքաքսայուղերի պահեստավորման հետ կապված,
- Շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից մերձակա բնակչությանը պատճառվող անհանգստությամբ
- Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

4.2 Օդի աղտոտում

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոց 16 բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատման աշխատանքներն ուղեկցվում են օդի աղտոտմամբ` պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխազագերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում համալիրի

կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի աշխատանքի դեպքում:

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները տեղայնացված են, ենթակա արագ ցրման: Դա բացատրվում է նրանով, որ շինհրապարակը բաց տարածք է և քամու միջին արագության պայմաններում նույնիսկ արտանետումները արագ կցրվեն և արտանետումները չեն գերազանցի ՍԹԿ-ները:

Դիզելային վառելիքի այրմամբ պայմանավորված արտանետումներ առաջանում են միայն շինարարության ընթացքում շինհրապարակի ներսում, տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում՝ շարժական աղբյուրներից: Այս արտանետումները կրում են ժամանակավոր բնույթ: Քանի որ շինարարական թափոնների և հումք տեղափոխող մեքենաների համար կսահմանվեն երթեր /մեքենաները դուրս կգան սահմանված ժամանակացույցով/, ապա շինհրապարակից դուրս, բնակելի տարածքներին մոտ արտանետումների գերազանցում չի լինի: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացատրվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականացվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Անբարենպաստ եղամակային պայմանների դեպքում արտանետումների քանակները թույլատրելի նորմերի սահմաններում կպահվեն հայտում նախատեսված միջոցառումների իրականացմամբ քանակները /ջրցան կամ տեխնիկական միջոցների կարգաբերում և այլն/: Շինհրապարակը բնակելի տարածքներից գտնվում է զգալի հեռավորության վրա և հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

4.3. Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Անհրաժեշտ ջրաքանակը բանավորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար կվերցրվի տարածքում գոյություն ունեցող Մոնթե Մելոնյան փողոցի հարևանությամբ առկա ջրամատակարարման ցանցից: Ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ցանցին առաջնահերթ միանալուց հետո: Շինարարության ընթացքում առաջացող կենցաղային կեղտաջրերը կմիացվեն տարածքում գոյություն ունեցող

կենտրոնին պատկանող ջրահեռացման համակարգին: Շինարարությունը իրականացնող անձնակազմը օգտվելու է ժամանակավոր տնակներից:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) T$$

Որտեղ՝ n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է - 15

N - ջրածախսի նորման՝ - 0.016մ³,

N_1 - բանվորների թիվն է - 50,

N_1 - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025մ³/մարդ օր<

T –աշխատանքային օրերի առավելագույն թիվը՝ 660 օր:

Այսպիսով՝ $W = (15 \times 0.016 + 50 \times 0.025) \times 660 = 983.4$ մ³/շին.ժամ, միջին օրեկան 1.49մ³:

Արտադրական նպատակներով ջրի ծախսը պայմանավորված փոշեռառաջացման օջախների ջրմամբ:

Այդ ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_1 = S \times K \times T \times K_1,$$

Որտեղ՝ S - թրջվող մակերեսն է, 200 մ²,

K - ջրցաման նորման – 0.0015մ³/1մ²

T – ջրցանի /տաք և չոր եղանակի/ օրերը, 240 օր

K_1 – ջրցանի օրական քանակը, 2

Այսպիսով՝ $V_1 = 200 \times 0.0015 \times 240 \times 2 = 144$ մ³/շին.ժամ:

Միջին օրեկանը կազմում է 0.6 մ³:

Փոշեռառացման համար ջուրը բերվում է ջրատար մեքենաներով:

Ոռոգման ջրապահանջը կկազմի՝

$$W_{\text{ոռոգ.}} = 0.003 \times S \times k \times T$$

S – ոռոգման ենթակա տարածքների մակերեսն է 1320 ք.մ.

k - ջրման քանակն է օրվա ընթացքում, 2

T – միջին տարեկան ջրման օրերի /տաք և չոր/ թիվն է, 120

0.003 – 1 ք.մ. ջրցանի նորմը,

$$W_{\text{ոռոգ.}} = 0.003 \times 1320 \times 2 \times 120 = 734.4$$
 մ³/տարի

Միջին օրական՝ 6.12 մ³/օր:

Ջրման աշխատանքները կիրականացնի համապատասխան համատիրությունը կամ Երևանի քաղաքապետարանի կողմից որոշված կազմակերպությունը:

Ջրահեռացում

Ջրցանը դասվում է անվերադարձ ջրօգտագործման շարքին և արտահոսք չի առաջանում:

Կենցաղային կեղտաջրերի ծավալը հաշվարկվում է հետևյալ կերպ՝
 $V_1 \times (1 - L)$, որտեղ L – կորստի գործակիցն է, ընդունվում է 5% (0.05)
 $983.4 \times (1 - 0.05) = 934.2$ մ³, միջին օրեկան՝ 1.41 մ³:

Շինարարությունը իրականացնող անձնակազմը օգտվելու է ժամանակավոր տնակներից: Ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու են քաղաքային ցանցերին միանալուց հետո: Այդ միացումները կատարվելու են առաջնահերթ:

Շինարարական աշխատանքների ընթացքում հոսքաջրերի առաջացում չի կանխատեսվում, բացի այդ աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները տարածքից:

Հնարավոր կեղտաջրերի առաջացման դեպքում հրապարակում կպահվի կեղտաջրերի հեռացման համար նախատեսված տարա, կամ բիոգուգարան, որտեղ կեղտաջրերի զանգվածի նստեցումից հետո, նստվածքը հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ պարզված ջուրը՝ հնարավոր կլինի օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Շինարարական աշխատանքների համար օգտագործել տեխնիկական որակի ջուր՝ տարածքում առկա ռոռգման ջրացանցից,
- Ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- Տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա հանրային միջավայրի վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությանների կանխման, կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

4.4 Մթնոլորտային օդ

- Օդային ազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝
- Շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,
 - Շինանյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,
 - Պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:
 - Գրունտի և սորուն նյութերի տեղափոխումնիրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով և երթևեկության համար սահմանել երթեր:
 - Խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

4.5 Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00-ից 18:00:

Շինարարական գործողությունների ընթացքում առաջացող հնարավոր թրթռումների դեպքում ազդեցություններ հարևան ազդակակիրների վրա չեն գնահատվում՝ հաշվի առնելով հարևան ազդակակիրների հեռավորությունը շինհրապարակի տարածքից: Շինարարական աշխատանքների ընթացքում շինարար կապալառուն պարատավոր է հետևել ՀՀ թրթռումների գործող նորմերը, քանի որ ծրագրի շրջանակում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը կվերացվի շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցների հաշվին:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- Շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- Պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- Շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում:
- Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;
Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը՝ հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների (բնակելի և հասարակական շենքեր) հեռավորությունը շինտարածքից:
Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *Աղյուսակ 6.-ում* (5.2 ենթագլուխ, Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարում):

4.6 . Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- Քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում վերջիններս պահել հատուկ անթափանց, փակ տարաներում՝ հետագայում որպես երկրորդային նյութ վերաօգտագործել շինարարական այլ աշխատանքներում, կամ հանձնել վերամշակող կազմակերպություններին,
- Մեքենա-սարքավորումների լիզբավորումը, քսայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողություններ իրականացնել Երևան քաղաքի մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությանները և հնարավոր ռիսկերը:
- Աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր:
- Շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,
- Աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝

- Շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
- Թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,
- Վտանգավոր թափոնների հանձնում ընկերությունների, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման, կամ տեղակայման արտոնագիր,
- Բացառել բետոնի պատրաստումը շինհրապարակում և այն շինհրապարակ բերել պատրաստի վիճակում,
- Շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատակարարներից:

4.7 Կենսաբազմազանություն

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցություններ չեն դիտարկվում, քանի որ բացակայում է բնական լանդշաֆտը, տարածքն ամբողջովին խախտված է շինարարական աշխատանքներից: Կենդանիների հանդիպելը տարածքում անհավանական է, պայմանավորված ճանապարհների և տրանսպորտային շարժի առկայությամբ:

Ճանապարհների խաթարման և ծանրաբեռնվածության հետևանքով բնակչությանը պատճառված անհանգստությունը մեղմելու նպատակով նախատեսվում է՝

- Շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար տարածքների տրամադրում,
- շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժի կազմակերպում շարասյուններով և սահմանափակ արագությամբ (≤ 30 կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժի կազմակերպում՝ առնվազն 30 րոպե պարբերականությամբ,
- Շինհրապարակում խուսափում՝ շինարարական ու կենցաղային աղբի այրումից և կուտակումից,
- Շինարարական աշխատանքների վերաբերյալ մոտակա բնակչությանը իրազեկում, որոնց արդյունքում կարող են ավելանալ փոշու քանակները, աղմուկի մակարդակը և ժամանակավորապես փակվեն ճանապարհները,
- Ցուցանակների տեղադրում, ինչպես նաև ժամանակավոր անցումների նախատեսում՝ որպես այլընտրանքային ճանապարհներ:

4.8 Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- Թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս.
- Շինհրապարակը ցանկապատել և վերահսկել՝ կանխելու համար չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ,
- Վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- Որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ
- Շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում:

4.9 Թափոնների և այլ նյութերի կառավարումը

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոց 16 բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շինարարական աշխատանքների ընթացքում կառաջանա շինարարական աղբ և կենցաղային թափոններ:

Շինարարական աշխատանքների ժամանակ կառուցապատվող տարածքում հողային աշխատանքներից առաջացող հանույթի, մշակվող գրունտի ծավալը ընդհանուր կկազմի 14.500 մ³ որից 3500 մ³ կօգտագործվի հետլիցքի համար, իսկ գրունտի ավելցուկային՝ 11.000մ³ ծավալը կտեղափոխվի արտոնագրված աղբավայր՝ Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված, կամ կրկնակի կօգտագործվի:

Շին աշխատանքների ընթացքում առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերը (հիմնականում մետաղի ջարդոններ և փայտանյութ) կտեսակավորվեն և կպահվեն հրապարակում նախատեսված վայրերում՝ շինարարի կողմից հետագա օգտագործման նպատակով:

Շինարարական աղբը (հիմքերի փորման ժամանակ առաջացած մնացորդային գրունտի և շինաղբի ծավալները ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում կանոնավոր կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև պարբերաբար տեղափոխվելու և տեղադրվելու են հատկացված աղբավայրում:

Աշխատանքների ընթացքում քայքայողների, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման իրավիճակում նախատեսվում է նշված նյութերը պահել հատուկ անթափանց և փակ տարաներում, որոնք հետագայում որպես երկրորդային նյութ կվերաօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում:

Գործունեության ընթացքում կենցաղային աղբը կհավաքվի կենցաղային աղբի համար նախատեսված աղբամաններում և կանոնավոր կերպով կհեռացվի շինարարական հրապարակից:

Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ.-ի N430-Ն հրամանի հավելվածի՝ շինարարության ընթացքում առաջացող թափոնները ներկայացված են՝

- շինարարական աղբով, ծածկագիր՝ 9120060001004 /վտանգավորության 4-րդ դաս/,
- սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ, /վտանգավորության 3-րդ դաս, ծածկագիր՝ 5410030302033/,
- քանեցված շարժիչների յուղերի թափոններ, որոնք պատկանում են վտանգավորության 3-րդ դասին, ծածկագիր՝ 5410020102033:

Յուղերի առավելագույն քանակները շինարարության ընթացքում ընդհանուր կկազմեն 60:

Կենցաղային չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 00 4: Օրեկական կտրվածքով կառաջանա առավելագույնը 10կգ կենցաղային աղբ:

Աշխատանքների ընթացքում քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման իրավիճակում նախատեսվում է նշված նյութերը պահել հատուկ անթափանց և փակ տարաներում, որոնք հետագայում որպես երկրորդային նյութ կվերաօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում, կամ կհանձնվեն նշված թափոնները մշակող լիցենզավորված կազմակերպություններին:

Թափոնների կառավարմանն ուղղված միջոցառումները նախատեսված են ԲԿՊ-ում

4.10 Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները ներառում են.

- Աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար նշանակել պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:
- Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, արգելող պաստառներ այլ:
- Ապահովել շինհրապարակում աշխատողների համար հանգստի պայմաններ և կենցաղային պայմաններ /լվացարան, զուգարան/:
- Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:
- Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:

- Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ սարքավորումով:
- Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել գրանցամատյանում:
- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)
- Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը շխատանքներն իրականացնել այնպես, որ նվազագույնի հասցվի ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա:
- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախագուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:
- Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

4.11 Փոխհատուցում

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության:

Շինհրապարակի համար մշակվելու է տարածքների վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան: Կանաչապատման աշխատանքներն իրականացվելու են նախագծման առաջադրանքի պահանջներին և տարածքի համար հետագայում մշակվող տարածքի կանաչապատման սխեմային համապատասխան: Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Բնակելի թաղամասի կանաչապատման մակերեսը կկազմի ընդհանուր հողամասի 40%-ը /1320 մ² մակերեսը/: Կառուցվելու է այգի, որը կծառայի հանգստի և ժամանցի համար: Կանաչապատման համար նախատեսվում է շինհրապարակ բերել բուսահող: Բուսահողի բերումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համաձայնեցված Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Կանաչապատման միջոցառումները կիրականացվեն բարեկարգման և կանաչապատման պլաններին համապատասխան: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է թույա սյունաձև, գնդաձև ակացիա, հացենի և այլ ծառատեսակներ, ինչպես նաև ծաղկասածիլներ և խոտի սերմ: Սիզամարգով կանաչապատումը նույնպես կիրականացվի կանաչապատման նախագծին համապատասխան:

Վերը նշված տեսակները հարմար են Երևանյան լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին: Երևանյան լանդշաֆտում ծառերի կաչողականությունն ապահովվելու է պարտադիր ոռոգման և խնամքի պայմաններում, որի իրականացման պատասխանատուն հանդիսանում է կառուցապատողը: Ոռոգումն իրականացվելու է կառուցվող ոռոգման ցանցի միջոցով, որը կմիանա Մոնթե Մելքոնյան փողոցի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցին: Ամբողջ հողամասը կունենա ոռոգման ավտոմատ համակարգ: Նախագծված ոռոգման ցանցը, որը կունենա 200 մ երկարություն, կմիանա տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման համակարգին՝ կնքվելիք պայմանագրին համաձայն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո որպես կարևոր միջոցառումներ նախատեսվում է՝

- Բոլոր մակերեսներն այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնել մինչև սկզբնական վիճակը
- Ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացնել շինհրապարակից,
- Թփերի և ծառերի վերատնկման վայրը և քանակը համապատասխանեցնել դենդրոնախագծի պլանին, ապահովել թփերի 90% կաչողականությունը:
- Այն տեղամասերում, որոնք ենթակա են գործունեության ազդեցության, նախատեսվում է իրականացնել նախնական ուսումնասիրություն և ետնախագծային մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

5. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում կիրականացվեն մշտադիտարկումների միջոցառումներ և ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (մեկ անգամ մեկ ամսվա ընթացքում): Մշտադիտարկումների համար /փոշու, աղմուկի, հողի/ նախատեսված ծախսերը ողջ շինարարական ժամանակահատվածի համար կկազմեն 300.0 հազար ՀՀ դրամ:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է հավելված 1-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է պայմանագրային փաստաթղթերին:

6. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

<<ԽԱԶՀԱՐ>> ՄՊԸ-ի կողմից Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոց 16 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման շրջանակներում շահառու և ազդակիր հանրությունն իրազեկվել է նախատեսվող գործունեության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետություն օրաթերթի 2020թ-ի փետրվարի 26-ի համարում հրապարակված հայտարարության միջոցով 2020թ-ի մարտի 10-ին կազմակերպված հանրային քննարկումների միջոցով: Հանդիպմանը մասնակցել Երևանի քաղաքապետարանի

ներկայացուցիչները, պատվիրատուի և ձեռնարկողի (նախագծային ընկերության) ներկայացուցիչները: Արձանագրությունը և մասնակիցների ցանկը ներառված են սույն ՆԳՀ-ի փաթեթի Հավելված 2-ում: Նախատեսվող գործունեության վերաբերյալ Երևանի քաղաքապետարանը տվել է իր նախնական համաձայնությունը՝ 17.03.2020թ-ի N 17/20668 գրությամբ, որը ևս ներառված է սույն ՆԳՀ-ի փաթեթում՝ որպես Հավելված 3:

Հանդիպման տեսաձայնագրությունը, սույն հայտի էլեկտրոնային տարբերակի հետ միասին ներկայացվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, որպեսզի այն փոխանցվի <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Ծրագրի Գործողությունները	Հնարավոր Ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող Միջոցառումները	Մեղմացնող միջոցառման պատասխանատուն	Մոնիթորինգի պատասխանատուն
<p>Նախագծային փաստաթղթերի պատրաստում</p> <p>Շինարարական Հրապարակի Բոլոր գործողությունները</p> <p>Աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց անվտանգություն</p>	<p>Բացասական ազդեցություններ՝ շինարարության փուլում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում,</p> <p>ԲԿՊ-ի բնապահպանական Պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման:</p>	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև պայմանագրային փաստաթղթերում: - Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների ձեռք բերում - Տարածքում առկա ինժեներական ենթակառուցվածքների անջատման, կամ տեղափոխման վերաբերյալ թույլտվության ձեռք բերում, սեփականատիրոջ հետ համաձայնեցում - Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ - Աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար նշանակել պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: - Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, արգելող պաստառներ այլ: - Ապահովել շինհրապարակում աշխատողների համար հանգստի պայմաններ և կենցաղային պայմաններ /լվացարան, զուգարան/: - Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում: - Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում: 	<p>Շինարարության կապալառու</p> <p>Կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող Երևանի քաղաքապետարան</p>

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նախնական գնահատման հայտ

		<ul style="list-style-type: none"> - Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ սարքավորումով: - Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել գրանցամատյանում: - Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) - Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը շխատանքներն իրականացնել այնպես, որ նվազագույնի հասցվի ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա: - Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ: - Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ: 		
<p>Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ Այլ շինարարական աշխատանքներ</p>	<p>Շին տեխնիկայի շահագործումից փոշու և վնասակար նյութերի արտանետումներ;</p>	<ul style="list-style-type: none"> - Օդի աղտոտման և փոշու կառավարում Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում: - Անհրաժեշտ է իրականացնել շին հրապարակի պարբերական ջրցանում փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով; - Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և հնարավորինս 	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող, Երևանի քաղաքապետարան Բնապահպանության և ընդերքի</p>

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նախնական գնահատման հայտ

		<p>ծածկել կուտակված նյութերը փոշու տարածումից խուսափելու համար;</p> <ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով; - Շինարարական աշխատանքների ընթացքում հատուկ տարողություններ և աղբավայրեր կնախատեսվեն տարբեր տեսակի շինարարական աղբի հեռացման համար - Աշխատանքների ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և աղբ, որոնք անմիջապես կտեղափոխվեն կամ ընկերության արտադրամաս, կամ համապատասխան թափոնավայրեր և չեն առաջացնի կուտակումներ - Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով - Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի 		<p>տեսչական մարմին</p>
<p>Թափոնների կառավարում</p>	<p>Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;</p> <p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով Հնարավոր է վտանգավոր նյութերի Թափանցում հողի մեջ:</p>	<ul style="list-style-type: none"> - Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել 	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող, Երևանի քաղաքապետարան</p>

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նախնական գնահատման հայտ

Աղմուկի և թրթռումների կառավարում	Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:	<ul style="list-style-type: none"> - Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը; - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին: - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը; 	Շինարարության կապալառու	Երևանի քաղաքապետարան
Շինհրապարակի վերականգնում		<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ ապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն; - Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները; - Մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը; - Մշակված ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները; 	Շինարարության կապալառու	Երևանի քաղաքապետարան

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նախնական գնահատման հայտ

		<p>- Կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն կանաչապատման նախագծի բարեկարգման պլանների;</p> <p>Ձեռնարկել տնկված ծառերի, թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր կայունության աճն ապահովելու համար</p>		
--	--	---	--	--

Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է նախագծային աշխատանքների արժեքի մոտ 1,5%

8. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	(ն՞վ է իրականացնում մոնիթորինգը)
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու Երևանի քաղաքապետարան
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս Երևան քաղաքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու Երևանի քաղաքապետարան

<p>Հողային աշխատանք-ները</p>	<p>- Հանված հողային գրունտները պահեստավորում են թույլատրված վայրում - Անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով - Բուսահողի պահեստավորում հատուկ հատկացված վայրում</p>	<p>Շինհրապարակ</p>	<p>Գործընթացների ստուգում</p>	<p>Հողային աշխատանքների ընթացքում</p>	<p>Պատվիրատու Կապալառու քաղաքապետարան</p>
<p>Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում</p>	<p>Վառելիքի, յուղերի և այլ վտանգավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքերի ֆիքսում, պատճառների պարզման և կանխարգելման գործողությունների նախաձեռնում</p>	<p>Շինհրապարակ</p>	<p>Շինհրապարակի գնում</p>	<p>Շինարարության ընթացքում</p>	<p>Կապալառու Երևանի քաղաքապետարան</p>
<p>Շինարարական հրապարակի բարեկարգում</p>	<p>Շինարարական հրապարակի ժամանակավոր պահեստի ապամոնտաժում, և տեղանքի բարեկարգում - Շինհրապարակի վերջնական մաքրում, տարածքի բարեկարգում և վերականգնում</p>	<p>Շինարարական հրապարակ, ժամանակավոր պահեստներ</p>	<p>Ստուգման գործընթացներ</p>	<p>Շինարարության ավարտական փուլ</p>	<p>Կապալառու Երևանի քաղաքապետարան</p>
<p>Աշխատանքի անվտանգություն</p>	<p>- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն</p>	<p>Շինհրապարակ</p>	<p>Ստուգման գործընթացներ</p>	<p>Աշխատանքների ողջ ընթացքում</p>	<p>Կապալառու Երևանի քաղաքապետարան</p>
<p>Շինհրապարակի վերականգ-</p>	<p>- Շինհրապարակը մաքր-Ված է, նյութերը և թա-Փոնները հեռացված են,</p>	<p>Տեղամասեր Կատարած Ստուգայցեր</p>	<p>Շինհրապարակի գնում</p>	<p>Շինարարության ավարտին</p>	<p>Կապալառու Երևանի</p>

<p>նում, կանաչապատում և տարածքի բարեկարգում</p>	<p>- բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր Օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի Տարածքը բարեկարգված և կանաչապատված են, ապահովված է ծառերի թփերի և այլ բուսականության նորմալ աճ</p>	<p>Կանաչապատող բոլոր տեղամասերը</p>	<p>Ստուգայցեր</p>	<p>Շինարարության ավարտից սկսած մինչև ծառերի աճի կաշռականության ապահովումը</p>	<p>քաղաքապետարան Կապալառու Երևանի քաղաքապետարան</p>
---	---	-------------------------------------	-------------------	---	---

9. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. Հունիսի 21:
- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011 ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. Սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- <Http://xn--80aajzhcnfck0a.xn--p1ai/publicdocuments/1310049.pdf>
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- <Www.arlis.am>
- <Www.atdf.am>
- ՀՀ կառավարության N 862-Ս որոշում: Անհատույց սեփականության իրավունքով գույք հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ կազմակերպելու մասին: 25 օգոստոս 2016, URL: <https://www.e-gov.am/gov-decrees/item/27593/>:
- Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներ, Մոսկվա, Հիդրոմետհրատ – 1983:
- ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիանների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ**

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ**

23.09.18

Սույն վկայականով հաստատվում է «17» Սեպտեմբերի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑԿԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՈՒԲԵՆ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ ԽԱՉԻԿԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏԼՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Մալաթիա-Սեբաստիա Մոնթե Մելքոնյան փողոց 16

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՍՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

13.09.2018թ. թիվ 10763 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲԵՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-007-0282-0247

Մակերեսի չափը (հա)՝ 0.339197

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցված իրավունքը պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Դավիթ Զորանյան
Վերականգնողական պաշտոնը՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր



ՔայսակաՆ N 17092018-01-0047, գաղտնաբառ՝ 1G7AHPZYKJSP

Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նախնական գնահատման հայտ

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ N 635 - 2018

ՀԱՏԱՏՈՒՄ ԵՄ _____ Կ. Տ. _____


_____ -ին Հողիատկացման հիմքը 05.06.2018թ. Կ.2108-Ա

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՎԱԲԱԿՈՒՄԸՍ _____ Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ _____ 2018 թ.

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՎԱԲԱԿՈՒՄԸՍ _____ Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ _____ 2018 թ.


ՍԱԼԱԹԻՎ-ՍԵՐՎԱՏՅԱ Մոնթե Մելքոնյան փողոց հ.16 հասցե

Վարչական շրջան _____ Մասշտաբ 1:1000




Անուրոյի հարցումը անհրաժեշտության դեպքում պետք է սեփական միջոցների հաշվին իրականացնի տարածքով անցնող հարկորակցութիւնների տեղափոխման աշխատանքները:

ՀՈՂԱՄԱՍԻ				ՇԻՆՈՒԹՅԱՆ			
Պատճառ	Կողողինատներ	Գծային	Աստիճանակից տեխնիկական	Պատճառ	Կողողինատներ	Գծային	Աստիճանակից տեխնիկական



Բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նախնական գնահատման հայտ



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<Երևան քաղաքի Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի Սոնթե Մելքոնյան 16 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցում>> նախատեսվող գործունեության վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների

2020թ-ի մարտի 10-ին, ժամը 12:30-ին ք. Երևան, Սոնթե Մելքոնյան 16 հասցեի հարևանությամբ գործող շինհրապարակի ճամբարակայն-տնակում, տեղի ունեցան <<Երևան քաղաքի Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի Սոնթե Մելքոնյան 16 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցում >> նախատեսվող գործունեության վերաբերյալ 1-ին հանրային քննարկումները՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն: Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթի փետրվարի 26-ի համարում, որի պատճեն ներառված է Նախնական Գնահատման Հայտի փաթեթում:

Հանդիպմանը մասնակցում էին նախագծային ընկերության (Ճարտարապետական Արվեստանոց Ադելյան ՍՊԸ), որը հանդիսանում նաև ձեռնարկող, նախագծի պատվիրատու ընկերության (Խաչհար ՍՊԸ), Երևանի քաղաքապետարանի, նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի մշակման և հանրային լուսմների կազմակերպման պատասխանատու ընկերության (Էկոնոմ Էկո ՍՊԸ) ներկայացուցիչներ: Մասնակիցների ցուցակը ստորագրություններով ներառված է Նախնական Գնահատման Հայտի փաթեթում:

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ Գորիկ Ավետիսյանը ողջունեց մասնակիցներին և հայտնեց, որ հանդիպման նպատակն է <<Երևան քաղաքի Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի Սոնթե Մելքոնյան 16 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցում>> նախատեսվող գործունեության ներկայացումն ու քննարկումը: Այդ համալիրի կառուցման գործունեությունը համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի համապատասխանում է Գ կատեգորիային, քանի որ կառուցապատման մակերեսը կազմում է 1500ք.մ-ից ավել: Նա նշեց, որ հանրային քննարկման պահանջը սահմանված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով, համառոտ ներկայացրեց ընթացակարգը՝ նշելով որ համայնքը պատշաճ կերպով ծանուցվել է և խոսքը փոխանցեց նախնական գնահատման հայտի մշակման և հանրային լուսմների կազմակերպման պատասխանատու ընկերության ներկայացուցիչ Մարտիրոս Նալբանդյանին:

Մ. Նալբանդյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին հետաքրքրության և մասնակցության համար և իրազեկեց նրանց, որ հանրային քննարկումները կազմակերպվում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և

փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 19 նոյեմբերի 2014 թվականի N 1325-Ն` «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» որոշման դրույթներին համապատասխան: Նա ներկայացրեց «Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան 16 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցում» նախատեսվող գործունեությունը, որի նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի կողմից 2018 թ-ի նոյեմբերի 14-ին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը կամ նախագծման թույլտվությունը: Տեղեկացրեց նաև որ կառուցապատումը իրակացվելու է սեփականության իրավունքով կառուցապատող ընկերության ներկայացուցչին պատկանող շուրջ 3400 ք.մ. տարածքի վրա և նախագծման նորմատիվները համապատասխանում են օրենքով սահմանված պահանջներին, ինչպես նաև ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանված պահանջներին: Ներկայացրեց մի քանի հիմնական ցուցանիշ. 1) հողամասի մակերեսը շուրջ 3400 ք.մ.; 2) կառուցապատման մակերեսը ընդհանուր 1855 ք.մ., որից վերգետնյա ծավալը` շուրջ 39% կազմում է 1225 ք.մ., ընդհանուր բակային տարածքը կազմում է շուրջ 2360 ք.մ., որից 1040 ք.մ. կլինի ալֆալտապատ, իսկ 1320 ք.մ.-ը կանաչապատ, որը կազմում է մոտ 40%; 3) ընդհանուր բնակելի համալիրը բաղկացած է լինելու 18 հարկից, յուրաքանչյուր հարկի բնակելի մակերեսը 1200 ք.մ., բացի վերգետնյա 18 հարկից լինելու է նաև ստորգետնյա ավտոկայանատեղի 4 հարկից, յուրաքանչյուրը 22 ավտոմեքենայի համար: Ներկայացրեց շրջակա միջավայրի այն հիմնական բաղադրիչները, որոնք կուսումնասիրվեն և կներկայացվեն նախնական գնահատման հայտում, նշելով որ տեղանքը հատուկ բնապահպանական կարևորության տարածք չէ և նախնական ուսումնասիրությամբ այստեղ չեն ֆիքսվել կարմիրգրքային բուսատեսակներ: Նա նշեց նաև, որ շինարարության ընթացքում հնարավոր հիմնական ազդեցությունները պայմանավորված կլինեն աղմուկով և փոշու արտանետմամբ, որի համար սահմանված կլինեն դրանց մեղմացնող միջոցառումները, աղմուկի պարագայում շինարարության ընթացքում կապահովվեն համապատասխան կառավարության որոշումով սահմանված նորմերը, իսկ արտանետումները պետք է կառավարվեն այնպես, որ չզերազանցեն թույլատրված ֆոնը: Որպես մեղմացնող միջոցառում, նա նշեց, որ պարբերաբար կկիրառվեն ջրցան մեքենաները, որոնց միջոցով օրվա որոշակի ժամերի պարբերաբար կիրականացվի փոշենստեցումը շին հրապարակի տարածքում: Ներկայացվեց նաև, որ շինարարության ավարտական փուլերում կդրվի նաև տարածքի բարեկարգման պահանջ, բարեկարգմանը գույառնեղ կմեկնարկեն նաև տարածքի կանաչապատման աշխատանքները:

Հավելում՝ Գ. Ավետիսյան – Տարածքի 40%-ի համար, որը նշված որպես կանաչապատման ենթակա տարածք, պետք է տեղեկություն ներկայացվեն ծառատեսակների, քանակների, ծառերի և թփերի համամասնությունների մասին` դենդրոնախագծի տեսքով:

Պարզաբանում՝ Ա. Աղեկյան – Այդ տարածքում՝ Մոնթե Մելքոնյան փողոցի կողմից, աղմուկից պաշտպանելու համար ստեղծվելու է բուֆերային կանաչ գոտի, խոշոր բաձր ծառերով, կլինի կանաչ խոշոր զանգված, որի կաշտպանի կառուցվող շենքը աղմուկից և

փոշուց: Ոռոգումը իրականացվելու է կաթիլային համակարգով, կկազմվի դենդրոնախագիծ:


Հարց՝ Մ. Նալբանդյան – Մեկ հարց, որը կհետաքրքրի հատկապես կապալառուին. Հնարավոր է արդյոք նախքան եզրակացության տրամադրումը նախնական հողային աշխատանքների թույլտվություն ստանալ:

Պատասխան՝ Գ. Ավետիսյան – Պետք է դիմել Երևանի քաղաքապետարանի վերահսկողության վարչությանը այդ հարցով, կամ գրությամբ դիմել քաղաքապետարանին:

Վարման կարգով՝ Գ. Ավետիսյան – Այլ հարցեր կան? Եթե չկան, ապա տեղեկացնեմ, որ սահմանված կարգով կկազմվի այս քննարկման արձանագրությունը, բացի դա, 5 աշխատանքային օրվա ընթացքում Երևանի քաղաքապետարանը կներկայացնի նաև իր դիրքորոշումը նախատեսվող գործունեության վերաբերյալ, որից հետո ձեռնարկողը կկազմի Նախնական գնահատման հայտի փաթեթը՝ դիմելու ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությանը, փորձաքննական գործընթացը մեկնարկելու նպատակով: Նա շնորհակալություն հայտնեց ներկաներին և հաջողություն մաղթեց նախատեսվող գործունեության իրականացման հարցերում:

Քննարկումների վարող՝

<<Էկոնոմ Էկո>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ




Մ. Նալբանդյան

Քննարկումների արձանագրող՝

<<Ճարտարապետական Արվեստանոց Ադելյան >> ՍՊԸ-ի


ներկայացուցիչ



Մ. Բաբայան

Քննարկումների պատասխանատուի ներկայացուցիչ՝

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝




Գ. Ավետիսյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝

<< Ճարտարապետական Արվեստանոց Ադելյան >> ՍՊԸ-ի

Ներկայացուցիչ, նախագծի ճարտարապետ՝



Ա. Ադելյան

ԳՐԱՆՑԱԹԵՐԹ

2020թ-ի մարտի 10-ին ժամը 12:00-ին ք. Երևան, Մոնթե Մեյրոնյան փողոց 16 հասցեում նախատեսված հանրային ծանուցման և քննարկումների (1-ին փուլի հանրային ծանուցում և քննարկումներ) մասնակիցների

(<<Ճարտարապետական արվեստանոց Ադելյան>> ՍՊԸ-ի կողմից մշակված, ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մեյրոնյան 16 հասցեում կառուցվելիք բազմաֆունկցիոնալ համալիրի նախագծի վերաբերյալ)

N	Անուն, ազգանուն	Կազմակերպություն/պաշտոն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	Ջեզրյան Լուսինե	ԵՄՈՒՑ ֆոն-ֆեր, «Նոր արվեստ» շենքում	098131451	
2.	Բ. Վ. Ե. Բաղդասարյան	բաշ կեր "ՍԴԵ" 1/մ ձեռքի	093550005	
3.	Ռոբերտ Արմենյան	Երևանի փոփ-օպերա	098-33-93-81	
4.	Արշակունի Մեղակյան	Թախչի Զեյնալյան	091523809	
5.	Վարդան Կարապետյան	«Երևանի շինարարական ընկերություն» ՍՊԸ, Քաղաքի կենտրոնի վարչություն	093001662	
6.				
7.				
8.				
9.				
10.				
11.				
12.				

Հավելված 3. Երևանի քաղաքապետարանի նախնական համաձայնության գրությունը:



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 17/20688

« 17 » 03 2020թ.

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԱՆՈՑ ԱՂԵԿՑԱՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա. ԱՂԵԿՑԱՆԻՆ

Հարգելի պարոն Աղեկյան

Ի լրումն մեր 09.03.2020թ. հ. 17/20688 գրության հայտնում եմ, որ աշխատակազմի բնապահպանության վարչությունը «Խաչիար» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Մոնթե Մելքոնյան 16 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկմանն ապահովել է ներկայացուցչի մասնակցությունը և տալիս է նախնական համաձայնություն՝ գործունեության ընթացքում բնապահպանական բոլոր նորմերը պահպանելու և դենդրոնախազիծ ներկայացնելու պայմանով:

Հարգանքով՝

Աշխատակազմի բնապահպանության

վարչության պետի տեղակալ

Գ. Նավասարդյան

Կատ. Գ. Ավետիսյան
Հեռ. 011-514-263

Հավելված 4. Կառուցապատողի լիազորագիր՝ տրված Ձեռնարկողին

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

ք. Երևան

08 սեպտեմբեր 2020թ.

Սույնով «ԽԱՉՀԱՐ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ 00018682, պետական գրանցման N 264.110.02336), ի դեմս ընկերության տնօրեն Արել Ավագյանի, ով գործում է լիազորող ընկերության կանոնադրության հիման վրա և հանդիսանում է ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան 16 հասցեում կառուցվելիք բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատող, լիզորում է «Ճարտարապետական Արվեստանոց Ադեկյան» ՍՊ ընկերությանը (ՀՎՀՀ 01555093, պետական գրանցման N.273.110.04143), ի դեմս տնօրեն Ա. Ադեկյանի, ով գործում է լիազորվող ընկերության կանոնադրության հիման վրա, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված փորձաքննական գործընթացում հանդես գալու որպես Ձեռնարկող՝ «ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան 16 հասցեում կառուցվելիք բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատում» նախատեսվող գործունեության փորձաքննության շրջանակներում, կատարելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի իմաստով Ձեռնարկողի համար սահմանված գործառույթները:

Լիազորող՝

«ԽԱՉՀԱՐ» ՍՊ


ընկերության տնօրեն



Արել Ավագյան

Հավելված 5. Հրդեհային անվտանգության պահանջներին համապատասխանության վերաբերյալ լիազորված մարմնի գրություն

Մ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

№ ՔՏԱԽՕԳ.Ձ.Ո/3273-20 «29» 10 2020թ.

«Ճարտարապետական արվեստանոց Ադելյան»
ՍՊԸ տնօրեն Ա.Ադելյանին
ք.Երևան, Պողոսյան 2/1, բն. 13


Ի պատասխան Ձեր 21.10.2020թ. դիմումի


Հարգելի պարոն Ադելյան

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը քննարկել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մեյքոնյան 16 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի լրամշակված նախագծերը, և տեղեկացնում է, որ դրանք համապատասխանում են հրդեհային անվտանգության պահանջներին:

Սույն գրությունը վավեր է նախագծում համապատասխան դրոշմակնիքի առկայության դեպքում:


Հարգանքով՝ Recoverable Signature


ԱՐԱՀ ՊԱՊԻԿՅԱՆ
Signed by: PAPIKYAN ARAZ 3802880100




ԱՐԱՀ ՊԱՊԻԿՅԱՆ

Կառարող՝ ՆՏՓՎ բաժնի գլխավոր մասնագետ Ա.Յազեղյան
հեռ.՝ 060 86 66 66, 10-43



0054, Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ., Ա. Միկոյան 109/8,
էլ. փոստ՝ utfsib@utfsib.gov.am, հեռ.՝ (+374 60) 86 66 66



**11. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ԱՐԴԻԱԿԱՆՑՄԱՆ ԵՎ ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
(ԴԵՆԴՐՈՆԱԽԱԳԻԾ)**

Բարեկարգման, արդիականացման եվ կանաչապատման նախագիծը (Դենդրոնախագիծ) կցված է սույն հայտի նախնական(չլրամշակված) փաթեթին՝ առանձին գրքի տեսքով և հայտի լրամշակման փուլում կամ հետևանքով փոփոխության չի ենթարկվել: